

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԱՆԳԻՆ Է

ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԶԻՐԱԿԱՆԱՆԱՐ, ԵԹԷ ԶԸԼԼԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ՆԱԽԱԳԱՂ ԼԱՀՈՒՏ

Հանրապետության նախագահ էմին Լահուտ երկկողմանի նախագահական պայտերի միջոցով ընդունեց Դավիթ Բենեթի ղեկավարած իսրայելական դեմոկրատիկ խորհրդի ղեկավար Մուշեղ Մուշեղյանին:

Այս առիթով, նախագահը յայտարարեց, որ ազատագրության պայտերի շրջանակներում, եթե չլրջար ազգային բանակը, անոր միասնական կեցուածքը՝ դիմադրություն է նկատվում, եւ անշուշտ՝ Սուրիոյ գորակցութիւնը: Նախագահը նկատեց, որ ազատագրութիւնը ետք բանակին ուսերուն դրուած պատասխանատուութիւնը համագործակցութեան արժէքն է:

Զօր-Լահուտ ըսաւ, որ Լիբանանէն խորայնեան ուժերու պարտադրարար հեռացումը ամբողջական խաղաղութիւն չի նշանակեր, այլ ատիկա կ'ըլլայ միայն կոյանէն ամբողջական հեռացումով եւ պահեստինցի գաղթականներու տունդարձով:

Ետք՝ էջ 2

Յ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԿԸ ՇՆՈՐԱՒՈՐԷ ԶՕՐ. ՄԻՇԷԼ ՄԻԼԷՅՄԱՆԸ

Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէն երկկողմանի շնորհաւորական գիրք մը յղեց լիբանանեան բանակի ընդհանուր իրաւաւոր զօր. Միշեղ Մուշեղյանին, բանակի տօնին առիթով:

Հ. Յ. Դ. Կեդրոնական կոմիտէն կը յայտնէ. «Զեզի եւ լիբանանեան բանակին կ'ուղղենք մեր յարգանքները եւ անկեղծ մաղթանքները՝ Սոցոստոս Լիառիբով, մաղթելով, որ այս հաստատութիւնը կը շարունակէ մեծ գոնողութեան վրայ, եւ միշտ իր առաքելութիւնը՝ Լիբանանի եւ ժողովուրդին պաշտպանութեան ի խնդիր»:

ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՏԵՏԵԱՆ ԿԸ ՀԵՏԱՊՆԴԷ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՀԱՐՅԸ



Նախարար Խալիլ եւ երեսփոխան Տէտէան

Երկկողմանի երեսփոխան Արրահամ Տէտէան այցելեց տեղեկատուութեան եւ գաղթականութեան հարցերու նախարար Անուար Խալիլի եւ արժարժեց տակաւին գաղթական վիճակի միջոցով գտնուող հայ ընտանիքներու խնդիրը:

Ա. Տէտէան ապա այցելեց Գաղթականական Մտտուկի ընդհանուր տնօրէն Շատի Մասաատի, որ խոստացաւ յուշել անկախ հարցերը եւ քանի մը ամիսներու ընթացքին վճարել 60-70 գաղթական հայ ընտանիքներու հատուցումները:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Երկկողմանի ժամը 6:30ին Հ. Յ. Մարգարապատակումը այցելեց իսլամական Մրազիւրներու Միութեան պատուիրակութիւնը, նախկին երեսփոխան Ատնան Թրապուրիի գլխավորութեամբ: Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան Պէյրութի եւ Հիւսիսի ընտրաշրջաններուն մէջ գործակցութեան կարելիութիւնները:

ԵԱՄԵՐ ԱՐԱՖԱԹ ԿԸ ՓՈՐՁԷ ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱՌԱԲԵԼԱԳՈՅՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՊԱՂՈՎԵԼ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՀՈՉԱԿԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԻՆ

Երուսաղէմի ապագան օրակարգի վրայ դրուած գլխաւոր հարցն էր երկկողմանի երկիրներու եւ Երուսաղի մէջ, այն պահուելու, երբ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատը եւ ամերիկացի պաշտօնատարներ կը փորձէին յառաջ մղել խաղաղութեան գործընթացը:

Արաֆատը երկէ Ալ-ճերիոյ մէջ տեսակցութիւն ունեցաւ նախագահ Ապտէլապի Գուրաբալիի հետ, քննարկելու համար պաղեստինեան իրաւաւորութեան գործընթացին վերջին իրադարձութիւնները եւ յատկապէս՝ Բէյրութի Տէյվիտի վեհաժողովին ձեռնարկը: Արաֆատը, որ շրջապատուած էր ճեղքաւորներով, վերջնական ու ամբողջական կարգի մը ձեռնարկած է, կ'ուզէ կարելի եղած չափով պօրակցութիւն ապահովել խաղաղարար իր ճիգերուն եւ պաղեստինեան պետութիւնը հոչակելու ծրագիրին:

Խօսելով պետութեան հոչակման ծրագիրին մասին՝ Արաֆատը վերստին շեշտեց, որ չի մտադրիր ինտեգրել 13 Մեպտեմբերի ժամկէտը: Ան դիտել տուաւ, որ որոշուած թուականին պիտի յայտարարուի:



Պուրաֆալիքա եւ Արաֆատ

տարարուելի պաղեստինեան անկախ պետութիւնը:

Պաղեստինցիներն ու իսրայելացիք որոշած են շարունակել խաղաղութեան բանակցութիւնները՝ վերջնական ու ամբողջական համաձայնագիր մը ստորագրելու համար: Համաձայնագիրը արգելափակուած է Երուսաղէմը, որուն ապագային գծով տարակարծիք են երկու կողմերը: Պաղեստինցիները կը պնդեն, որ Իսրայել պէտք է յանձնէ 1967ի պատերազմին գրաւուած բոլոր հողերը, որոնց կարգին է Արեւելեան Երուսաղէմը: Իսրայել անընդունելի կը նկատէ այս

պահանջը՝ հաստատունաւոր Երուսաղէմի գծով որեւէ վիջուկ չկատարելու իր որոշումին վրայ: Երկու կողմերը համաձայնութիւն չեն գոյացուցած նաեւ բնակեցման վայրերուն, պաղեստինցի գաղթականներուն տունդարձին, սահմաններուն եւ այլ հարցերու մասին:

Արաբական եւ իսրայելական բոլոր երկիրները պօրակցելու կը կանգնին Արեւելեան Երուսաղէմը Իսրայելի կողմէ 1967ին գրաւուած հող նկատող տեսակետին եւ կը պահանջեն, որ Իսրայել գործարարութեան դէմ ՄԱԿի թիւ 242 որոշումը, որ կը պահանջէ գրաւեալ բոլոր հողերուն վերադարձը:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ամր Մուսա ըսաւ, որ արաբական երկիրներուն համար նպատակաւոր է, որ պաղեստինեան իսրայելեան բանակցութիւնները շարունակուին, սակայն՝ հիմնուելով ՄԱԿի որոշումներուն վրայ: Մուսա կը խօսէր նախագահ Հիւսիսի Մուսաթաբի եւ Յորդանանի Ապտալա Ա. թագաւորին միջեւ տեղի ունեցած տեսակցութեան մը: Մուսա ըսաւ, որ արաբական կողմը կը պահանջէ իսրայելական կողմէ իր զինուորներուն անհետացած զինքերը վերադարձնելու:

Ետք՝ էջ 10

Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ ՇԵՆՏԻ ՀԱՍԱՆ ՆԱՍՐԱԼԼԱՅԻ



Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը, ընկերակցութեամբ հայկական երեսփոխանական պլոնի ներկայացուցիչ Սեպուհ Յոսէֆեանի, երկկողմանի մէջ ժամ տեսակցութեամբ հանդիպում մը ունեցաւ Հրգայալայի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալայի հետ: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան հարաւի ազատագրութեան եւ հարաւի ժողովուրդին գորակցելու կանգնելու հարցերը, ինչպէս նաեւ՝ երեսփոխանական յառաջիկայ ընտրութիւններուն առնչուող խնդիրները:

Շէյխ Նասրալայ երկարօրէն կանգ առաւ Լիբանանի մէջ հայութեան եւ Հ. Յ. Դ. ի դերակատարութեան վրայ, շեշտելով, որ Լիբանանի մէջ քաղաքական իւրաքանչիւր միակողմանի դերակատարութիւնը ունի եւ ոչ ոք իրաւունք ունի շրջանցելու գայն:

Հանդիպումին ընթացքին հաստատուեցաւ Պէյրութի երեք ընտրաշրջաններուն մէջ Հրգայալայի եւ Հ. Յ. Դ. ի միջեւ գործակցութեան սկզբունքը:

Հանդիպման աւարտին պատուիրակութեան անունով Յ. Բագրատունի թղթակցեցրեցան Հարցումներուն պատասխանելով՝ ըսաւ. «Շէյխ Նասրալայի հետ մեր հանդիպումին կարեւոր մէկ բաժինը յատկացուած էր հարաւի ազատագրութեան հարցին՝ Հ. Յ. Դ. ազատագրութիւնը բարձր գնահատեց Հրգայալայի դերակատարութիւնը եւ Լիբանանի պետութեան կեցուածքը»:

ՎԱՐՉԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՅ ՌԻՎԸ

ԵՐԵՒԱՆ, 1 (ԱՐՄԷՆՓՐԷՍ).- Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան Երեքշաբթի օր ընդունեց Երեւանի մէջ ԵԱՀԿի գրասենեակի ղեկավար Ռոյ Ռիվը:

Գնահատելով վարչապետին գլխաւորած կառավարութեան թափանցիկ եւ գործնական աշխատեցածը՝ Ռոյ Ռիվ յայտնեց, որ ԵԱՀԿի Երեւանի գրասենեակը հետաքրքրուած է Տավուշի մարզին մէջ կառավարութեան մշակած ծրագիրով: Վարչապետ Մարգարեան Երկուշաբթի օր աւարտած էր Տավուշի մարզ կատարած իր այցելութիւնը: Ռիվ ըսաւ, որ գրասենեակը մասնաւորաբար հետաքրքրուած է Հայաստանի եւ Ազգային շահակաւ եւ ազգային շահակաւ կողմերուն ջոկոյ սօցտագործման հարցը լուծելու համար:

Վարչապետ Մարգարեան առաջարկեց, որ ԵԱՀԿ իր կարելիութեան սահմաններուն մէջ միջնորդէ Տավուշի մարզի սամահան վրայ գտնուող Ջողագի ջրամբարին հայկական եւ ազգային շահակաւ կողմերուն ջոկոյ սօցտագործման հարցը լուծելու համար:

Անոնք համաձայնած են, որ նմանօրինակ հարցերու արագ լուծման հեռաձայնային ուղղակի կապ հաստատելու ազգային շահակաւ կողմին հետ: Վարչապետ Մարգարեան յայտնեց, որ հակառակ հայկական կողմի պատասխանատուութեան, Ազգային շահակաւ կը խուսափի գործակցութենէ:

Ռոյ Ռիվ խոստացաւ այս ուղղութեամբ օժանդակել Պաքուի մէջ ԵԱՀԿի գրասենեակի հետ գործակցարար:

Ռիվ անդրադարձաւ նաեւ գրասենեակի ծրագրերուն, մասնաւորաբար փտածութեան դէմ պայքարի ծրագրի մշակման եւ իրագործման աշխատանքներուն: Ան առաջարկեց, որ այս ուղղութեամբ Հայաստանի կառավարութեան հետ ստեղծուի աշխատանքային միացեալ խմբակ:

Ընդունելով առաջարկը՝ վարչապետ Մարգարեան կառավարութեան անունով պատրաստակամութիւն յայտնեց գործակցելու փտածութեան դէմ պայքարի ծրագրի մշակելու եւ իրագործելու ուղղութեամբ:

ԶԻՆԵԻՉ ՈՉ ԵՒՍ Է

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ երկկողմանի մահացած է պաշտպանութեան փոխ նախարար Գորգիս Անաթոյի Չինեւիչը: 1992ին ի վեր ան կը ծառայէ Հայաստանի բանակին մէջ: 1992ին 94 ան եղած է Հայաստանի պաշտպանութեան նախարարի խորհրդակալ եւ սպայակոյտի պետի առաջին տեղակալ: 1994ին ստանձնած է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան բանակի հրամանատարի առաջին տեղակալի՝ սպայակոյտի պետի պաշտօնը: 1997ին ան նշանակուած է Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար: Իր ծառայութիւններուն համար արժանացած է Բագրատի շքանշաններու:

(ԱՐՄԷՆՓՐԷՍ)

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ

Երկկողմանի Արամ Ա. կաթողիկոս Թեհրանի մէջ հանդիպումներ ունեցաւ Իրանի ներքին եւ արտաքին գործոց նախարարներուն հետ: Խօսակցութեանց նիւթ դարձան Իրան - Լիբանանի եւ Իրան - Հայաստանի յարաբերութեան ու գործակցութեան, ինչպէս նաեւ Իրանի հայութեան դերակատարութեան ու անոր իրաւունքներուն կապուած շարք մը հարցեր:

Վեհափառը այսօր կը վերադառնա Լիբանան: 2 ՕԳՈՍՏՈՍ 2000

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ծ Ա Ռ Ա Տ Ն Կ Ո Ւ Մ

ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ՊԷՅՐՈՒԹԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՊՏԵԼ ՄԸՆԷՄ ԱՐԻՍԻ

Հինգշաբթի, 3 Օգոստոս 2000, կէսօրէ առաջ ժամը 10:00ին, Մանաքայի Քրդիչին վրայ, Զինուորական լողաւազանի հրապարակ:

ԿԱՍ ԱՌԷՔ ԹՈՋՆԱԶԳԻՆԵՐՈՒ ԳՊՐՈՅԷՆ

«Եղբայր ենք մենք»... Միտքս եկալ խօսքն այս խրատ, բանաստեղծին արտհն փրթած, հայրու ակունքին մէջ նստած, յաւերժական հունչով յտակ:

Բեպ հետ կրոյց մը՝ հայրորդի, կ'արժէ անշուշտ օրերուն այս տագնապալի: Պատմութիւն մը կուտարալի ու դաստառու, գուցէ մոռցընել տայ մեզի տագնապ կոչուած մղձաւանջը, որ կը ծաւալի օր ըստ օրէ, ամբան տաք ու տապին, կլիմային մէջ խանձող: Հեքիաթի պէս թող տարածուի դասն այս պարպով՝ փոխանցուած թռչնապահներու դպրոցէն, որ կու գայ վերէն, կապոյտ, պայծառ երկինքէն:

Գաղթող թռչունները տաքուկ բոյներ կը փնտռեն ու կը չունեն սահմաններէն բաց ու արձակ, կը գրաւեն հորիզոններ հեռարձակ: Թռչուններն են բարի ու հեպ, օրինապահ, եղբայրասէր: Կամքը անոնց մէկ է, տրվէ՛, եթէ ցայսօր դէռ չես ճանչցած թռչնապահները դարձուր:

Բարի արագիլը բերենք այսօր իբրեւ օրէնք եւ օրինակ: Եթէ տեսնես թռչչք անոնց, գարնանային եղանակին գալուստն է՝ իրենց թւերուն տակ շարկած: Երանն է մեծ, հսկայական ու միատարր: Հաւաքական ու ծեղ կափկափ... Երկինքներու ճամբաներէն կը թռին ու թափահարելով կը յառաջանան դէպի կայսրն քնուրթեան:

Մենք մոռցած ենք, եղբայր սիրելի, դասը բնութեան ու մեր արտերուն կը հիւսենք ոլոր - մոլոր ճամբաներ ու չենք հասնիր նպատակին:

Գիտնականներ, թռչուններու կեանքը ուսումնասիրած գիտութեան նուիրեալներ այսօր յուշեցին ինձի, որ իշեցնեմ քեզի, եղբայր սիրելի, որ...

Թռչուններու երանք մեծ, արագիլ, կոունկ թէ տարաշխարհիկ սագի սերունդ, թռչչք կ'առնեն խուճք առ խուճք, երան - երան, հետեւելով առաջնորդին դեկավար, հայր - թըռչունին, որ կը տարածէ թւերն հսկայ, եռանկինի ձեւով յաղթական:

Թափարահունը լայնածիր, հովեր կու տալ հետեւողներու երամին: Լսենք խօսքը գիտնականին.

«Եթէ գաղթող թռչունները երան չդառնան, դանդաղ կը թռչնեն, կ'ուշանան, ու ոմանք ալ տեղ չեն հասնիր, ճամբու կիսուն կ'իջնան թւաթափ: Եթէ հետեւին հայ թռչունին, արագութիւնը կ'աւելնայ 71 առ հարիւր: Եթէ յոգնի առաջնորդող թռչունը, փոխանորդ մը կը ստանան պարտականութիւնը, կը քաջալերէ երամներուն պատգամը, ու երթը կը հասնի իր լրումին, դէպի նոր բնակավայր»:

Բնութեան դասն է այս, անխախտ ու իմաստուն: Վա՛յ մեզի, եթէ անտեսենք առաջնորդող ու ծին պարտութիւնը: Անշատողական տրամադրութիւն քաղաքական ՔԼԻՇԷ լոյունգներով պարտուած, խօսքեր՝ «դեմոկրատ», շոյալ ու շինձու: Ո՛ւր է ուժը «հաւաքական պարտութիւն», չարենցեան իմաստութեան: Գիտենք՝ «Մեր փրկութիւնը մեր հաւաքական ուժին մէջն է», երամային անխախտ կեցուածքին, երկինքներէն իջած դապին, բնութենէն շնորհուած փրկափայլութեան:

Գեղեցիկ է չուն գարնանային երամներուն: Հրաշալի է կարգապահութիւնը թռչնապահներուն: Ու մենք խուճան չենք, «Կոունկ» երգած ենք վաղուց, «Բարի արագիլ» եղած ենք վաղուց, «Երգելով մեռած ու ապրած ենք», մի՛շտ...

«Ետն» մեզի թափահարումները՝ պարապին մէջ, մարպանքները օդային, անոնք մեզ տեղ չեն տանիր, կլոր - կլոր կը դառնան, ու

ՇԱՆՆ ԴՈՒՄՏ
Շար. ք. էջ 10

ՄԱՀԱԶԴ

Տիար Պետրոս Զարչաֆճեան եւ գաւակները՝ Սիլվա, Յարութ եւ Շողիկ Տէր եւ տիկին Յովհաննէս Ղուկասեան եւ գաւակները Տէր եւ տիկին Սարգիս Հինտոյեան եւ գաւակները Զարչաֆճեան ընտանիք Թորամանեան ընտանիք եւ ճամայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, աներմօր եւ հարազատին՝

ՈՎՍԱՆՆԱ ԱՆԱՀԻՏ ՉԱՐՇԱՖՃԵԱՆԻ (ՄԵՆՎ՝ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ, 1924ԻՃ)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 1 Օգոստոս 2000, կէսօրու ժամը 1:00ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը կէսօրէ ետք ժամը 5:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխարկուեցաւ Ֆրնո Շրպակի Ազգային գերեզմանատունը:

• Ներկայ ընդունիլ իբրեւ մահագը:
• Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Սըբ էլ Պաուշիէ, Մար Եուհաննա թող, Կարպետ Պէյրեան շէքը, հեռ. 01-875584, 2 որբեր շաբթի 2, Հինգշաբթի 3 եւ Ուրբաթ 4 Օգոստոսին:

ՇԸՍ - ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Վարչապետ Սեյիմ Հըս էրէկ վարչապետարանին մէջ հանդիպում մը ունեցաւ փոխ վարչապետ, ներքին գործոց նախարար Միշէլ Մըրի հետ: Մըր հանդիպումէն ետք ըսաւ, որ քննարկած են հարաւի մէջ տարածուող ապահովական ուժերու կազմակերպման առնչուող խնդիրներ:



Մըր վարչապետ Հըսի մօտ

Մըր ըսաւ, որ վարչապետին հետ նաեւ արծարծած է յառաջիկայ երեսփոխանական ընտրութիւններուն եւ անոնց նախապատ-

ՎՐԻՊԱԿ

«Այնքան տար» պանդոկին մէջ Հ. Յ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի կազմակերպած հանգիպումին պաշտօնական ճիւղերու շարքին ներկայ եղած է նաեւ պետական կեդրոնական ընկեր մարմինի անդամ Ժան Պէլեան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Աստուծոյ փառք կու տանք եւ ուրախութեամբ կը յատարարենք, թէ վարժարանիս պրէօվէի պետական ընկերութեան մասնակցող 19 աշակերտներէն 13ը յաջողած են, որոնցմէ 6 աշակերտներ լաւ յիշատակութեամբ:

Իսկ Բ. պարաօրէնայի դասարանի փորձառական գիտութեանց մասնակցող 16 աշակերտներէն՝ 15ը, ունենալով լաւ յիշատակութիւն:

Ստորեւ կը ներկայացնենք անունները.

- ՊՐԵՍՎԷ Արմինէ Զարբեան, Անի Նաճարեան (լաւ), Արշալուս Թիւրքեան, Անիթա Մուշոյեան (լաւ), Պեթի Գազանեան, Փիթըր Կարապետեան, Պերն Գարաբըրեան, Զիւլի Բիրայեան, Ռազմիկ Գարբիէլեան, Սիւզան Պարսամեան, Շողեր Սգանյան, Գալէ Սըգանյան (լաւ), Մարալ Բեշեքեան, Մարի Հարթեան (լաւ), Նաթալի Բակետեան (լաւ), Նոպա Զափարեան, Հուրի Գուլումեան եւ Վարդան Ակոբեան (լաւ):
- Բ. ՊԱՔԱՆՍՐԷԱ Պերն Զափարեան, Թիս Մարալ Սաղըբեան, Բաֆֆի Բարսեղեան, Ռիթա Կիւլլէրեան, Ռիթա Թաշեան, Սիլվա Պարտագեան, Քեթի Հարմանտարեան, Կասիա Բեյրուկեան, Բնար Սաղըբեան, Երան Սուքիասեան (լաւ), Մարիմա Զօրեքեան, Նուշիկ Շանյան, Անդրանիկ Սարգիս, Յարութ Կիրիւնեան եւ Յովիկ Պեքեքեան:

ԱՊԱՀՈՎ

ՏԻՆԱՆՈՒՄՅԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՏՈՎ

ՓՈՒՍԱՆ 50 ԱՍԵՐԻԿԵԱՆ ՏՈՒՆԻ ԲԺՅԿԻ ԱՅՅԵՆՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԱՍՏԱՃԱՆԱՉԱՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՎԱՐ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆԻ ԼԾԽԵՒ Ա. ՊՈՒՂՈՒԻՆՆԵԱՆ ԸՆԿԵՐԱԲՇՎԱԿԱՆ ԵՒ

ST. MARC ԱՍՏԱՃԱՆԱՉՄԱՆ ԿԵԴՐՈՆԵՐՈՒ ԷՅՏ

ԱՏԵՆ - ԱՅԵՏ ԵՆԷ, Բ. ՅԱՐԱ ԵՆՈ. 01/262231 - 01/2425567

ԿԵԱՆՔԻ ՓՐՑՈՒԱԾ ԷՋԵՐ

Պատմութեան ցերեզմանի ժողովածուի Եղիմակ՝ ՍՈՒԱ Պ. ԱՃԵԱՆ Հրատարակութիւն՝ Մէյրոս, 2000

Սիրով հրատարակուած էջ սոյն գիրքին հանրութեան ցերեկայացման հաւաքին, որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 3 Օգոստոս 2000, երկուշեան ժամը 7:30ին, Հայ Աւետ. եկեղեցւոյ շրջափակին մէջ, Էշրեֆիէ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առ տիար Գեորգ Արքայի Կիւղեան, որուն հասցեն անյայտ է:

Լիբանանի Հայոց թեմի դատաստանական խորհուրդ, իր 13 Ապրիլ 2000 թուականի գումարած Ա. խորհրդակցական նիստին, ամուսնալուծման վճիռ արձակելու գաղաղատ աստիճանով վերջացուց ձեր ընտանեկան դատը:

Թուականէ սկսեալ 20 օր ժամանակամիջոց տրուած է ձեզի առաքելութիւն ցերեկայացնելու եւ 40 օր վերաքննութեան դիմելու:

Հակառակ պարագային, ժամանակամիջոցի ավարտին, արձակուած վճիռը կը ստանայ վերջնական հանգամանք:

ԴԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

րատական աշխատանքներուն վերաբերող հարցեր, տեղեկացումներով, որ ցարդ ընտրական քարտ ստացած քաղաքացիներուն թիւը շուրջ մէկ միլիոն չորս հարիւր հազար է:

Վարչապետը երէկ ընդունեց նաեւ Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մուհամետ Ալի Սուպիանին, Սուրիոյ փոխարամիչոցներու նախարար Մաքրամ Օպէյտը, նախկին նախարար Էլիաս Սեպան եւ ընդհանուր դատախաչ Ասունար Ատունուր:

ՆԵՍՒՊ ԼԱՀՈՒՏ ԿԸ ՔՆՆԱԿԱՏԵ ՄԸՐԸ

Վարչապետին այցելեց նաեւ երեսփոխան Նեպիլ Լահուտ: Հանդիպումէն ետք Լահուտ իր խօսքին մէջ քննադատեց ներքին գործոց նախարար Միշէլ Մըրը՝ երեսփոխանական ընտրութիւններուն կապուած հարցերով: Ան ըսաւ, որ վարչապետը տեղեկ պահած է իրաւաստի Մեթնի մէջ տեղի ունեցող ապստամբութեան եւ օրէնքի խախտումներուն մասին, որոնց ուղղակի պատասխանատուն կը նկատէ ներքին գործոց նախարարը:

ԱԶՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԻՏԻ ԶԻՐԱԿԱՆԱՆԱՐ...

Շարունակուած Ա. էջէն

Նախագահը ըսաւ, որ այցելալին, երբ բանակը հարաւ ուղղուէր, Իսրայէլ սպանալիքներ կ'ուղղէր եւ պայմաններ կը պարտադրէր, որ միայն 500էն 1000 կիւնուր մեկնի հոն, ինչպէս նաեւ ունենայ թէթեւ եւ ոչ ծանր վէսեր: Այսօր, սակայն, Իսրայէլ կը պահանջէ Լիբանանի ամբողջ բանակը ուղարկել հարաւ, որպէս Վիերաշխարհի իր իսկ սահմաններուն ապահովութիւնը: Սակայն նախագահը ըսաւ, որ Լիբանան ոչ մէկ քայլի պիտի դիմէ Իսրայէլի պաշտպանութեան կամ ապահովութեան համար:

«ԱԶԴԱԿ»Ի ԶԵՆԱԶԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ

«ԱԶԴԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 269115 եւ 241274:

ՍՍԱՅԱՆՔ

«ՄԻՆՆՁԵՔ...» Զեյնիակ՝ ՄԵՍՐՈՊ ԶԱՅՆԻՆԻ

Շարունակուած է տղայգրութիւն «ՍԻՓԱՆ» հրատարակչատուն Գեորգ 2000

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ - ՎԱՐՉԱՊԵՏ ՀԸՍ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Հանրապետութեան նախագահ Գոր. Էմիլ Լահուտ երէկ Պաշտպանի մէջ ժողով մը գումարեց վարչապետ Սեյիմ Հըսի հետ: Անոնք քննարկեցին հարաւի ազատագրուած շրջաններուն մէջ Խիկիւլի ուժերու տարածման վերաբերող հարցեր, նախանցեալ օր պաշտպանութեան նախարարութեան Եարգի կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցած Խիկիւլի եւ իրանական բանակի յարձարատիճան գիտութեան ժողովին յոյսին տակ:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՄԻՆ ԺԵՄԱՅԷԼ ԱՅՑԵԼԵՑ ԼԱՀՈՒՏԻ ԵՒ ՊԸՐՐԻԻ

Նախկին նախագահ Ամին Ժեմալ, որ 12 տարուան բացակայութենէ ետք Փարիզէ վերադարձած է Հայրենիք, երէկ այցելեց Պաշտպանի նախագահական պալատ եւ տեսակցութիւն ունեցաւ հանրապետութեան նախագահ Գոր. Էմիլ Լահուտի հետ: Նախագահ Լահուտ ողջունեց Ժեմալին վերադարձը՝ ըսելով, որ ինք կ'ողջունէ իւրաքանչիւր իրանացիի հայրենիք վերադարձը:

Ամին Ժեմալի այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիլ Պրրիի: Հանդիպումէն ետք Ժեմալ շատ տառեց, որ Լիբանանի ժողովրդավար վարչակարգին մէջ խորհրդարանը կը նկատուի հիմնաքար:

ՊԸՐՐԻ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ ԹԵՀՐԱՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիլ Պրրի, ընդառաջելով իրանեան իշխանութիւններուն հրաւերին, այսօր կ'ուղղուի Ղէզլի Թեհրան, ուր տեսակցութիւններ կ'ունենայ աշխարհայ Ալի Խամենէյի եւ իրանցի այլ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ:

Միւս կողմէ, խորհրդարանի նախագահը երէկ ընդունեց արդարութեան նախարար Ժոզէֆ Շաուրը եւ աշխատակողական համադաշնակցութեան նախագահ Էլիաս Ապու Ռրգըր:

ՍՈՒՐԻՈՅ ՓՈՒՍԱՐԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Սուրիոյ փոխարամիչոցներու նախարարը՝ Մաքրամ Օպէյտ երէկ ժողով մը գումարեց Լիբանանի իր պաշտօնակիցին՝ նախարար Նեպիլ Միքաթիի հետ, որուն ընթացքին քննարկուեցան երկու երկիրներուն փոխարամիչոցներու մարպին վերաբերող հարցեր:

Այս ժողովին կուզատեւ, գումարուեցան նաեւ ծովային, ցամաքային եւ օդային փոխարամիչոցներու սուրիական եւ իբրանական յանձնարարութիւնները:

VARNA

295\$ Bungalow
350\$ ** Htl.
425\$ *** Htl. 5% գեղով

ամէն շաբաթ նոր առաջարկներ

ԶԱՐԱԹԱԿԱՆ ՈՂՂԱԿԻ ՄԵԿՆՈՒՄԵՐ ԴԵՊՈՒ ՎԱՆԱ ՍԱՆԱԿԱՐԻ ԴԻՐՈՒԹԻՒՆ

Գիճը կը ներկայի տրամադրուած, պանդոկ (նախաձայով), փոխարամիչոց եւ զբօսաշրջութեան գրքով:

BALKAN HOLIDAYS SARL
TRANSPLITEX TOURS

Սաղաթա, Ուրբէ Էլ Ռուժ 266, Audi Bank
ԵՆ.՝ 03-93322/920429
01-304552/63

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ	ՎԱՆԱՅ ՉԱՅՆ
ՉՈՐԵՔԸԱԲԹԻ ՕՐՈՒԱՆ ՀԱՅՏԱԳԻՐԸ	
F	6:30 - Բացում
M	6:35 - Բարի լոյս
	7:00 - Հայկական եւ օտար մեղմ երգեր
9	8:00 - Օրուան յայտագրի ընթերցում
4	8:15 - Տեղական մամուլի խորագիրներու ընթերցում
•	8:30 - Հայերէն լուրեր
7	8:40 - Օդերէն յոյժ
	8:45 - Ինչ կ'ըսեն աստղերը
M	9:00 - Հայկական խառն երգեր
h	9:30 - Թռիչք
Z	10:00 - Սակարան
	10:30 - Արաբերէն լուրեր
	10:45 - Արաբերէն երգեր
հեռ.	
2	12:00 - Շահանդուլիտի հետ
4	12:15 - Երաժշտութիւն
1	12:30 - Հայերէն լուրեր
2	13:00 - Սակարան
7	13:05 - Ազգային լեղափոխական երգեր
2	14:30 - Արաբերէն լուրեր
	15:00 - Արաբերէն յայտագիր
-	16:30 - Արաբերէն լուրեր
	16:40 - Հանդիպում
	18:00 - Beatlesh պատմութիւն
2	18:30 - Հայերէն լուրեր
4	
1	20:30 - Էսթրատային
1	22:30 - Պատուեր
9	00:30 - Փակում
9	

ՓՈՒԹԻՆ ԿԸ ՊԱՇՏՈՆԱԶՐԿԷ ՍԵՐԿԷՏԻ ՄՕՏԻԿ ՎԵՅ ԶՕՐԱՎԱՐՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Ռուսիայի նախագահ Վլադիմիր Փուտինը Երևանում 6 փոստիկների հետ հարցազրույցի ընթացքում նախարար Իկոր Սերկևեի դաշնակիցները կր նկատուին:

Սերկևեի բախում ունեցած էր սպալակոյտի պետ Անատոլի Քվաշնինի հետ՝ հետպիտեյ ալեյի նեղ կացության մատնող հրապարակալին բանավեճով մը:

Քվաշնին առաջարկած է կորիզային հրթիռներով վթաղող ուժերը իբրև բանակին առանձին մեկ ճիւղը շնչել, անոնց համար օգտագործուող գումարները աւանդական վէճերով համար գործածելու առաջարկութեամբ: Սերկևեի, որ իր ամբողջ սապարէզը նշեալ ուժերուն մէջ անցուցած է, ծրագիրը անտրամաբանական գտած է:

Փութին երկու անձնատուրութիւններուն հրահանգած է, որ միասնաբար վերակազմակերպուի ծրագիր մը ներկայացնեն: Անոնք ստիկարած են անցեալ շաբաթ:

Սակայն ռուս պիտուրական մեկնաբաններ հաւանական նկատած են, որ բանավեճը վերջ պիտի գտնէ երկու բարձրաստիճան հրամանատարներէն մէկուն պաշտօնազրկումով:

Երկուշաբթի օրուան քայլէն ետք մարդիկ կըրնան ակնկալել, որ Սերկևեի պաշտօնազրկումը յաջորդ անձնատուրութիւնը ըլլայ:

ՓՈՒԹԻՆԻ ԺՈՂՈՎՐԻՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

Միւս կողմէ, Երեքշաբթի օր հրապարակուած հարցախոյզի մը արդիւնքները ցոյց տուած են, թէ Յուլիսի Փութինի ժողովրդականութիւնը բարձրացած է: Հարցազրույցներուն 73 առ հարիւրը ըսած է, թէ գոհ է անոր քայլերէն: Յարաբերաբար Յունիսի արդիւնքներուն ան 12 առ հարիւրի բարձրացում մը արձանագրած է յատկապէս Օքինաուայի մէջ անցեալ ամսուան Ութերու խմբակի վեհաժողովին ընթացքին անոր յաջող մասնակցութեան, Դաշնակցային խորհուրդին կազմին գծով յաղթանակին շրջանային ղեկավարներու հետ բանավեճին մէջ, եւ հարկային դրութեան բարեկարգումին պատճառով:

Քուէներու 49 առ հարիւրով վարչապետ Միքայել Քասիանով երկրորդ տեղը գրաւած է:

ՌԻԺԵՂ մրրիկ մը եւ անբնականօրէն տեղատարափ անձրեւներ հաղորդակցութեանց խանգարումներ պատճառած են Ռուսիայ ծայրագոյն արեւելեան շրջանին մէջ, ուր նաեւ շուրջ 30 քաղաքներ եւ գիւղեր ողողուած են, եւ բազմաթիւ ընտանիքներ անպատուար մնացած: Երջանը քանի մը օրուան մէջ 3 ամսուան անձրեւները միջին համեմատութեան համապատասխանող տեղատարափ դիմագրաւած է:

ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆՏԵՐՈՒ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ

ԱՆԳԱՐԱ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Թրքական ոստիկանութիւնը Երեքշաբթի օր աւելի քան 200 ցուցարարներու Անգարա մուտքը արգելակած է. անոնք կ'ուզէին բողոքաբերութեամբ արգելախափելու Թրքիայի Կոնյուքը կողմէ զբոսեղելու ծրագիրներուն դէմ:

Բանտարկեալներ եւ անոնց ընտանիքները կ'ընդդիմանան շուրջ 4000 արգելափակեալներ աւելի փոքր խուցերով 11 նոր բանտերու մէջ զբոսեղելու ծրագիրին: Անոնք ներկայիս լայն սրահներու մէջ արգելափակուած են:

Թուրք պաշտօնատարներ բանտերու գծով բարեկարգումները քայլ մը կը նկատեն՝ Եւրոպական Միութեան չափանիշներուն հասնելու համար, Դեկտեմբերին անդամակցութեան թեկնածուի իրավիճակ ստանալէ ետք:

Սակայն այդ քայլը կրնայ վատ հետեւանքներ ունենայ կառավարութեան համար, նկատի ունենալով, որ մարդկային իրաւանց պաշտպաններ, բանտարկեալներ եւ անոնց պարագաները կ'ընդդիմանան անոր՝ ըսելով, որ այդ քայլը բանտարկեալները պիտի մեկուսացնէ:

Թրքական բանտերու մէջ չարչարանքներու եւ վատ վերաբերմունքի մասին յաճախ ամբաստանութիւններ կ'ուղղուին իշխանութիւններուն:

Շարք՝ 199

ՔՈՒԷՅԹ - ԻՐԱՔ ԿԱՊԵՐՈՒ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԶԿԱՅ

ԿՂՍԷ ՍԱՊԱՆ

ՏՈՒՊԱՅ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Քուէյթի արտաքին գործոց նախարարը յայտարարեց, որ Իրաքի հետ մօտիկ ապագային կապերը վերահաստատելու որեւէ ծրագիր չկայ: Շէյխ Սապահ Ահմէտ աւելցուց, որ Քուէյթ կը մտադրէ վերանորոգել պաշտպանութեան մարզի համաձայնագիրները արեւմտեան երկիրներու հետ:

Շէյխ Սապահ, որ կը խօսէր իրաքեան ներխուժման տասնամեակին առիթով, դիտել տուաւ, որ կանխահամար է խօսիլ Պաղտատի հետ կապերը վերահաստատելու մասին, երբ Իրաք կը շարունակէ իր թշնամական ու յարձակողական քաղաքականութիւնը Քուէյթի դէմ:

Անցեալ Կիրակի օր Քուէյթի պաշտպանութեան նախարարը՝ շէյխ Սապահ Սապահ ըսած էր, որ պատրաստ է Իրաքայցեցելու, եթէ Պաղտատ ազատ արձակէ ներխուժումէն ի վեր անհետացած նկատուող վեց հարիւր հոգի:

ՄԻՆԸ «ԷՐ ՖԻՐԱՆՍ» ԱՌԿԱՆ ԿԸ ՊԱՇԷ ԹՈՒԻՉՔՆԵՐԸ ԶԱՆՉԱՆՈՒԱԾ ԲՈՆԵՐՈՏԻՆ ՇՈՒՐՋ ԲՆՆՈՒԹԻՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ՓԱՐԻԶ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Ֆրանսայի քաղաքային օդանաւային ճամբորդութեան իշխանութիւնները (Տէ. Ժ. Ա. Սէ.) Երեքշաբթի օր յայտնած են, թէ «Էր Ֆրանս»-ի Քոնքորտներու թռիչքները ցնոր տնօրինութիւն առկայութեամբ պիտի մնան, անցեալ շաբաթուան արկածին յոյսին տակ:

Փոխարան միջոցներու նախարար Ժան - Քլոտ Կէսօ վերոնշեալ իշխանութիւններուն եւ այլ մասնագէտներու առաջարկած է մշակել ապահովութեան յանձնարարութիւններ, որոնք առիթ պիտի տան «Էր Ֆրանս»-ին, որ իր մնացեալ 5 թռիչքներուն թռիչքներուն վերսկի:

Անոնք անցեալ Երեքշաբթի օրուան աղետէն ի վեր թռիչք չեն կատարած:

Տէ. Ժ. Ա. Սէ. ի մէկ բանքերը նախապէս յայտնած էր, թէ օդանաւերու մասնագէտները չեն կրցած նման միջոցառումներու գծով ծրագիր մշակել, նկատի ունենալով, որ արկածին շուրջ քննութիւն տանող մասնագէտները ցարդ չեն կրցած հաստատել դէպքերու շարքը, որ յանգած է գերաջնային օդանաւին բոցավառման եւ շահիջարումին:

Օդանաւին մէջ գրանուող 109 հոգին եւ գետնի վրայ 4 հոգի կոհ գացած էին, երբ Քոնքորտ Ռուսի - Շարլ տը Կոլ օդակայանէն թռիչք առնելէ երկու

վայրկեան ետք շահիջարուած էր Կոնէս քաղաքին մէկ պանդոկին վրայ:

Քննիչներ հաստատած են, թէ օդանաւին մէկ, թերեւս երկու անիւները պայթած են, եւ մեծ հրդեհ մը ծայր տուած է հաւանաբար վառելանիւթի կարելու «փախուստ»ի մը պատճառով, եւ թէ էջը կատարելու համար անհրաժեշտ սարքերը եւ շարժիչներէն երկուքը հարցեր դիմագրաւած են:

Սակայն քննութիւններ տանելու համար Կէսոյի կողմէ նշանակուած յանձնարարութիւն նախագահը Ալէն Մոնիէ, Երկուշաբթի օր յայտնած է, թէ այդ տրեւիչներուն միջեւ կապը անորոշ կը մնայ:

ԹՈՒՐԲՄԵՆԻՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԸ ՊԱՇՏՈՆԱԶՐԿՈՒԻ

ԱՇԽԱՊԱՏ (ՌՈՅԹԸՐԸ)- Հայկական ծագում ունեցող Թուրքմենիստանի արտաքին գործոց նախարար Պորիս Շիխմուրատով պաշտօնազրկուեցաւ նախագահ Սափարմուրատ Նիյալովի կողմէ:

Շիխմուրատովի անակնկալ պաշտօնազրկման պատճառը չբացայայտուեցաւ, սակայն ան անցեալ տարի կորսնցուցած էր փոխ վարչապետի իր դիրքը եւ քննադատուած էր նախագահին կողմէ, որովհետեւ սահուն կերպով չի խօսիր երկրին ապագային լեզուն:

Սահուն անգլերէն խօսող Շիխմուրատով 1993էն ի վեր երկրին արտաքին գործոց նախարարն էր եւ Աֆղանիստանի մէջ պինադադար մը հաստատելու նպատակով անոր փորձերն ու Արեւմուտքին մօտենալու համար որդեգրած քայլերը գնահատուած էին Արեւմուտքին կողմէ: Արեւմտեան դիւանագէտներ Սիւլովի այս որոշումը ետքայլ կը նկատեն:

ԲԱՆՉԱՐԵՂՆԻ ՇՈՒԿԱՆ ՄԵՐ ՄՕՏ

750 L.L.	1 ԶԻՆՈ ՊՈՊՈՄ
500 L.L.	1 ԶԻՆՈ ՍԱՐՈՒԿ
500 L.L.	1 ԶԻՆՈ ՍԱՐՈՒԿ
350 L.L.	1 ԶԻՆՈ ՍՏԵՊՊՈՆ
300 L.L.	1 ԶԻՆՈ ԿԱՂԱՍՔ
400 L.L.	1 ԶԻՆՈ ՍՈՒՍ
750 L.L.	1 ԶԻՆՈ ՍՄՏՈՐ
600 L.L.	1 ԶԻՆՈ ՊԵՏՆԱՆՆԵՂՈՐ
350 L.L.	1 ԶԻՆՈ ԼՈՒԿԻ
500 L.L.	1 ԶԻՆՈ ԿԱՐՈՒԼԳ
450 L.L.	1 ԶԻՆՈ ԼԻՄՈՆ
450 L.L.	1 ԶԻՆՈ ԵՄՊԱՆԱԿԱՄԱՔ
450 L.L.	1 ՏԱՏ ՏԱՆՍՔ
750 L.L.	1 ԶԻՆՈ ԿԱՆԱՅ ՊՊՈՒԵՂ
750 L.L.	1 ԶԻՆՈ ԿՈՒՒ ՊՂՊՅԵՂ
750 L.L.	1 ԶԻՆՈ ԸԱՆՆՈՒ ՊՊՈՒԵՂ
1750 L.L.	1 ԶԻՆՈ ՍՈՒԼՈՒՍԻԷ
2000 L.L.	1 ԶԻՆՈ ԿՈՒՏԱՏՈՒԿ
1000 L.L.	1 ԶԻՆՈ ԱՃՈՐ

75 L.L.	1 ԶԻՆՈ ԶՄԵՐՈՒԿ
500 L.L.	1 ԶԻՆՈ ՍԵՆ
1000 L.L.	1 ԶԻՆՈ ՏԱՆՉ
1000 L.L.	1 ԶԻՆՈ ԽՆՉՈՐ
950 L.L.	1 ԶԻՆՈ ԽՈՒՇ
950 L.L.	1 ԶԻՆՈ ՍԱՆՈՐ
1250 L.L.	1 ԶԻՆՈ ՊԱՆԱՆ
1000 L.L.	1 ԶԻՆՈ ԽԱՂՈՂ
750 L.L.	1 ԶԻՆՈ ԴԵՂՉ
850 L.L.	1 ԶԻՆՈ ԼԱՐԻՆՉ
750 L.L.	1 ԶԻՆՈ ԿՈՒՏՈՆ

MASTER MALL
supermarket

ԳՆՈՒՄԻ
ԼԱՒԱԳՈՅՆ ՏԱՍՏԵՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՈՒԺԸ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻՆ ՊԱՏՈՒԱՆԴԱՆՆ Է

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՆ ՄՏԱՀՈԳ Է ՂԱՐԱԲԱՂԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ

Ստորև կու տանք «Հայոց Աշխարհ» թերթին հարցազրույցը Հ. Յ. Դ. Բիւրոյի քաղաքական դիւանի ներկայացուցիչ Է Հայաստանի ազգային ժողովի պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործոց յանձնախումբի նախագահ Վահան Յովհաննիսեանի հետ, որ կ'անդրադառնայ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի ընտրութիւններուն արձանագրութեանը Հ. Յ. Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէին հրապարակած վերջին յայտարարութեան:

ՀԱՐՑՈՒՄ. - Պրն. Յովհաննիսեան, Դաշնակցութեան Արցախի Կենտրոնական Կոմիտէն յայտարարութիւն է տարածել, ուր դժգոհութիւն է յայտնում Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանութիւններին: Որո՞նք եղ զրա պատճառները:

ՊԱՏՄԱՍՆ. - Յայտարարութեան ընթացքին ծանօթացել եմ երկու օր առաջ եւ հիմնականում խօսքը գտնում է Դաշնակցութեան դժգոհութեան մասին՝ կապուած Ղարաբաղում խորհրդարանական ընտրութիւններին յետոյ ստեղծուած իրավիճակի հետ: Խնդիրն այն է, որ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանում Հ. Յ. Դ. խմբակցութիւնն անընդունելի է գրտնում Ազգային ժողովի նախագահի ընտրութեան, ինչպէս նաեւ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանի ղեկավարութիւնն ձեւաւորելու մեքանիզմները: Դաշնակցութիւնը կ'ազմում է Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանի գրեթէ երրորդ մասը եւ չնայած դրան, փաստորէն, փորձեր են արուել լիովին անտեսելու, հաշուի չառնելու ընտրութիւններում Դաշնակցութեան ձեռք բերած յաջողութիւնները: Հնչեցա՞մանք, որ քաղաքակիրթ աշխարհում ընդունելի է:

Սակայն դրանից յետոյ իրադարձութիւններն աւելի տագնապալի ընթացք ստացան: Ընտրուած դաշնակցական պատգամաւորներին մէկը՝ Մաքսիմ Միրզոյեանը գրկուեց իր լիակատարութիւնից եւ այդ ընտրատարածքում վերաբուեց իր կողմնակիցն ալ տք է կազմակերպուի: Ընդ որում, մեզ հասած տեղեկութիւնները համաձայն, նույնիսկ Ղարաբաղի ղեկավարութիւնը հասկանում եւ որոշ գրոյցներում արտայայտուել է, որ ընտրութիւնը բեղեցայ յայտարարելու մասին դատարանի որոշումը բոլորովին անհիմն է եւ միայն ու միայն քաղաքական պատկեր կարող է լինել: Այս ամէնին է առնչուում Դաշնակցութեան Արցախի Կենտրոնական Կոմիտէի յայտարարութիւնը եւ այդ փաստն ինքնին նշանակում է, որ իրավիճակը դարձել է ծայրայեղ անտանելի: Ես գտնում եմ, որ բոլոր այն դժգոհութիւնները, որ արձանագրուած են յայտարարութեան մէջ, արդարացի են: Դաշնակցութեան Բիւրոն բաժանում է այդ մտահոգութիւնները:

Հ. - Իսկ ինչո՞վ է բացատրում Ղարաբաղի իշխանութիւնների նման կեցուածքը: Ինչ-ինչ ինդիւիդուալ կան, որոնց շուրջ փոխամասնաւորութեան չէ՞ք եկել:

Պ. - Ճիշդն ասած, շատ մանրամասն ծանօթ չեմ ներ-

քին խոհանոցին, բայց մի բան եմ նկատել: Դաշնակցութեանը փորձում են ամէն գնով հետու պահել այնպիսի դիրքերից, որոնք մեզ համար շատ կարեւոր են: Օրինակ, որեւէ ձեւով բացառում են Դաշնակցութեան ներկայացուցիչներին տեսնել արտաքին յարաբերութիւններին համակարգում: Լինի դա արտաքին գործոց նախարարութիւնը, թէ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային ժողովի համապատասխան յանձնարարութիւնը: Առաջանում է հարց՝ ինչո՞ւ, ինչ ունեն արտաքին ուժերի հետ լուծելու, որ վստահում են Դաշնակցութեան ներկայութիւնից կամ մասնակցութիւնից: Սա մեզ համար խիստ մտահոգիչ է:

Հ. - Հ. Յ. Դ. Բիւրոն որեւէ կերպ արձագանգելու է Հ. Յ. Դ. Արցախի Կենտրոնական Կոմիտէի յայտարարութեանը: Դուք աշխատելու էք ինչ-որ կերպով պարզել առաջացած ինդիւիդուալ պատճառները:

Պ. - Դա մեր գործը չէ: Կայ Հ. Յ. Դ. Արցախի Կենտրոնական Կոմիտէն եւ թէ՛ տեղի իշխանութիւնները Դաշնակցութեան հետ խօսելիք ունեն, պէտք է խօսեն Կենտրոնական Կոմիտէի հետ: Եթէ խնդիրներ կան, որ Բիւրոյի մակարդակով պէտք է լուծուեն, ապա կարող են դիմել նաեւ մեզ: Մենք մեր կողմից նախաձեռնութեան անհրաժեշտութիւնն տեսելով պահին չենք տեսնում: Բայց նախարարութեան եւ այս գարգացումներից Դաշնակցութեան Բիւրոն, անշուշտ, իր հետեւութիւնները կ'անի:

Հ. - Որքանով է իրականութեանը համապատասխանում մամուլում այն հրապարակումները, որ Դաշնակցութիւնը հանրապետութեան նախագահին առաջարկել է իրեն յանձնել Հայաստանի ներքին գործոց նախարարի պաշտօնը, որպէսզի վերջ տա «տնտեսական ներքին»:

Պ. - Ցաւօք, այդ լուրերն ինձ են հասել միայն վերջերս եւ հաւաստիացնում եմ, որ դրանք բացարձակապէս իրականութեանը չեն համապատասխանում: Շատ յաճախ մեր մամուլում տպագրում են չտուգուած լուրեր, որ ներկայացում են գրեթէ իրրեւ հարիւր տոկոսանոց ճշմարտութիւն: Մինչդեռ մենք միշտ ասել ենք ե՛ւ նախագահին, ե՛ւ վարչապետին, ե՛ւ փոփոխուող ներքին գործոց նախարարներին, որ մեր կուսակցութիւնը պատրաստ է աշխուժորէն մասնակցել կարգուկանոնի հաստատմանը: Այդ պիսի մասնակցութեան ձեւը պէտք է ընտրենք պետութեան հետ համատեղ:

Բայց դա բնաւ չի նշանակում, թէ կուսակցութիւնը նախարարական պաշտօնի յաւակնութիւն ունի հէնց այդ ոլորտում: Հաւաստիացնում եմ, որ նման համատեսուծ ձեւք բերելու փորձ չի եղել եւ չի նախատեսուծ: Երանք, ովքեր շատ են անհանգստանում, կարող են հանգիստ քնել: Թէ՛ եւ թէ՛ ներքին գործերի նախարարութիւնը սկսի ընթացալ ինքնամաքրման եւ աւելի աշխուժ աշխատելու ճանապարհով, մեր կուսակցութեան աջակցութիւնը ճանապարհորդութեանը այդ մարդկանց երկար ժամանակ կը գրկի հանգիստ քնից:

ԱՂԱՆԴԱՐՈՒՆԵՐԸ ՍԻՍԻԱՆՈՒՄ ՊԱՌԱՎՏՈՒՄ, ԲԱՅԲԱՅՈՒՄ ԵՆ ԸԱՅ ՕՃԱՍՆԵՐԸ

Սիւնեաց Օրբէլեան պատմիչի վկայութեամբ, Սիսիանի Սուրբ Գրիգոր Լուսաորիչ անուանով եկեղեցին կառուցուել է ժող դարի երկրորդ կէտին, եւթարդարար՝ մինչեւ 584 թուականը: Պատմական փաստերը վկայում են, որ եղել է Սիւնեաց աշխարհի հոգեւոր կենտրոնը: Ընդը 200 տարի առաջ Սուրբ Գրիգոր Լուսաորիչ եկեղեցին վերանորոգուել է Սուրբ Յովհաննէս:

Սուրհրդային տարիներին հայաստանեան եկեղեցիները կա՛մ քանդուած, կա՛մ վերածուած էին պահեստի: Սուրբ Յովհաննէսը Անի եղել է բողի, ապա ցորենի պահեստ: Արդէն մեր դարի 50-60ական թուականներին սկսուել են եկեղեցու վերանորոգման աշխատանքները: Երկու տարի անց եւ 1979-ից սկսեց գործել. ամիսը, տարին մէկ քահանայ էր եկել, քարոզել տեղի հաստացեալ ժողովրդին, երկու տարի անց՝ 1981ին նշանակուել է հովիւ, սակայն պարբերաբար ծիսակարգ չի կատարուել: 1989ին վերականգնուեց հայ առաքելական եկեղեցու Սիւնեաց թեմը, Սուրբ Յովհաննէսը վերածնունդ ապրեց, սկսուեց հոգեւոր զարթոնքի ժամանակաշրջանը: Ամէն կիրակի եւ սուրբ տօներին մատուցում է պատարագ՝ 24 հոգանոց երգչախմբի մասնակցութեամբ: Խորաքանչիւր Ծաբաթ եւ կիրակի կատարում են ժամերգութիւններ, երեկոյեան՝ ժամերգութիւն, իսկ կիրակի անաքարոզ: Եկեղեցին ունի կից կիրակնօրեայ դպրոց, որտեղ սովորել են 250 աշակերտներ:

Սիսիանի շրջանում թեւ փակուել էին հայ առաքելական եկեղեցիներ, բայց ասել, թէ ժողովուրդը կտրուել էր հաւատից, սխալուած կը լինէր: Անատաղի հայերը հասնում էին Սուրբ Գրիգոր Լուսաորիչի կեղեցական ծիսակարգ օրէնքները, բայց մնացել է աւանդապաշտ: «Եթէ Սիսիանում եւ շրջակայ գիւղերում տասը հար-

սանիք կայ, ապա ի՞նչ անցնում է եկեղեցով: Մարդիկ եկեղեցու մուտքն անտեսաբանաբար, անկեղծութեամբ, հաւատով եւ վերաբերումով», ասում է Կարէկ քահանայ:

Աղանդաւորութիւնը Սիսիանի շրջանում սուրբ է գործել 90ական թուականներին սկսեց ցրտի:

Եկեղեցին երբեմն նաեւ ուժի գործադրմամբ կարողացել է արմատախիլ անել քրիշտայական աղանդը: Լկա մարդորսութեամբ եւ հոգեորսութեամբ աշխուժ աշխատանքներ ծաւալեցին շաքաթականներն ու հոգեգայտականները: Քրիշտ Սիսիան ներխուժեցին սատանայի ամենամոծ ծառաները՝ «Ինովայի վկաներ» չար աղանդի ներկայացուցիչները: Ըստ Էսթրեան, Սուրբ Յովհաննէս եկեղեցին քրիստոնէական քարոզչութեան թողալու, զբաղուելու աղանդաւորների դէմ հակաքարոզչութեամբ. տեղական ոստիոյով, թերթով, կենդանի քարոզչութեամբ փորձ է արուել յատկապէս «Ինովայի վկաների» արշաւանքի դէմ անել: Լրբեմն՝ ապարդիւն: «Վկաների թիւն օր-օրի աւելանում է:

Քրիստոնէայ Հայաստանի 1700ամեայ պատմութեան ընթացքում 20-ից անելի աղանդներ չեն եղել, մինչդեռ վերջին տասը տարիներին դրանք մի քանի անգամ շատացել են: Մայր աթոռն անուր հետեւում է Հայաստան այցելող աղանդաւորական շարժումների մեծահարուստ առաջնորդներին, մորմունները բացալատուել հովանաւորում են երկրի մի քանի կուսակցութիւններին, «Մայր հայրենիք» հեռուստաընկերութիւնը վերածուել է աւետարանականների խօսափողի: Հայաստանը 1700 տարի առաջ քրիստոնէութիւնը ընդունել է որպէս պետական կրօն, 1700 տարի հայ ժողովուրդը դաւանել է Առաքելական եկեղեցու պատիրաններ, եւ Առաքելական եկեղեցու դաւանանքից ցանկացած շեղում մեզ համար աղանդ է, իւրաքանչիւր աղանդ հետապնդում է քաղաքական նպատակներ, իւրաքանչիւր աղանդի փոխափայլութիւն մեզ համար անընդունելի է, քանզի հետապնդում է քաղաքական նպատակներ:

Կարէկ քահանայի համոզմամբ, դրսի

ԹԵԹՈՒՆ 3ԱԿՈՒԵՆԱՆ Սիսիան-Երեւան «Ազգ» Ծարը՝ էջ 8

ԻՆԶՈՒՒ Ի ՈՒԱՇ ԻՆԿԹՐԸ ԵՐԵՍ ԹԵՔԵԼ ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵԻՑ

Այն բանից յետոյ, երբ Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս եկաւ Ազգային Կոմիտէի խիստ քննադատութեամբ՝ մեղադրելով նրան միջազգային ահաբեկչութեանը, մասնաւորաբար՝ չեչեւ գրեհայիններին օժանդակելու մէջ, հանրապետութեան քաղաքական վարկանիշը երբեք: Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութիւնը յարձակումները Ալիեւի դէմ նշանակում են, որ Ուաշինկթընը արդէն լույս չի դնում Ազգային Կոմիտէի ներկայիս նախագահի վրայ: Այսօր Ալիեւի ինչպէս կողմնակիցներին, այնպէս էլ հակառակորդներին հետաքրքրում է. թէ ինչի հետ է կապուած Միացեալ Նահանգների վերաբերմունքի կտրուկ փոփոխութիւնը Ազգային Կոմիտէի ներկայիս նախագահի նկատմամբ: Ամենայն հակառակութեամբ, այստեղ կան մի քանի պատճառներ: Իտալիայից դրանցից հիմնականները:

Նախ՝ ալիեւեան վարչակարգը եւթարդում է լարուածութեան պահպանում Ուաշինկթընի եւ Մոսկուայի միջեւ: Այն բանից յետոյ, երբ վերջինս, Վլադիմիր Փուլինի իշխանութեան գալու արդիւնքում, մեծապէս աշխուժացել է իր քաղաքականութիւնը ԱՊՀ երկրներում, Միացեալ Նահանգները ստիպուած է հանդէս գտնել Ռուսաստանի ազգային շահախնդրութիւնների հետ յետիորդային տարածքում: Ուաշինկթընը շահագրգիռ չէ Մոսկուայի հետ ուղիղ հակադրմամբ: Պաքուի քարիւղի ծրագրերը, որոնց անկիւնաքարը քաղաքականութիւնն է, ընդամենը վնաս հասցրին ամերիկեան ընկերութիւններին: Այսօր Ուաշինկթընին հարկաւոր է սկսել իր քաղաքականացումը նախագահ Ազգային Կոմիտէում, որը չի ձգտի առհասարակ Միացեալ Նահանգները եւ Ռուսաստանը:

Երկրորդ, տարիքի հետ Ալիեւը դառնում է էլ աւելի անկախատեսելի եւ առաւել կամակոր քաղաքական գործիչ: Բաւական է լինել միայն նրա յաւակնութիւնները Անդրկասպիական խոնրակաշարի (այս կարիքի ինտերնացիոնալ էր Ուաշինկթընը) նկատմամբ: Ալիեւի այն յայտարարութիւնից յետոյ, թէ Ազգային Կոմիտէի գործը իր դեռուս գոյութիւնը չուներ կապ, Ռուսիայի մեծատանի նախագահ Սաֆարուրա Նիազովը միանգամից վերակողմնորոշուեց դեպի Ռուսաստան՝ նրա հետ կնքելով պայմանագիր

կազմակերպում մտակարարում մասին: Սա յանգեցրեց Միջազգային ընկերակցութեան լուծարմանը, որն ստեղծուել էր Անդրկասպիական նախագծի իրականացման նպատակով: Իսկ Անդրկասպիական նախագծի տալիսումը ձախողում էր Միացեալ Նահանգների արտաքին քաղաքականութեան համար. այս կազմատար խիստ անհրաժեշտ էր Ուաշինկթընին, որպէսզի վերջինս թուլացներ Թուրքմենստանի եւ Ուզբէքիստանի կախուածութիւնը Ռուսաստանից եւ ամբարկուէր իր ազդեցութիւնը Անդրկովկասի եւ Կենտրոնական Ասիայի երկրներում:

Երրորդ, Ազգային Կոմիտէի տնտեսութեան ներկայիս վատ վիճակը այլեւս չեն բարարում Միացեալ Նահանգներին: Ուաշինկթընը շահագրգիռ է Ազգային Կոմիտէի կայուն զարգացմամբ, որը նա դիտարկում է իբրեւ առանցքային երկիր Կասպիական-Կենտրոնական շրջանում: Բնաչափութեան ներկայիս զանգուածային ընդարկութիւնը անույսմանօրեւ կը յանգեցնի ընկերային պայթիւնի եւ իրավիճակի ապակայունացման:

Չորրորդ, փորձերուց սկսելով Կոմիտէի տնտեսական ցածրագրերը մշտապէս բախում են բարձրատիճանի պաշտօնեաների բացալատ կաշառակերութեան ու շորքումների փաստերի հետ, ինչը անարդիւնաւետ է դարձնում ցանկացած տրնտեսական նախագիծ: Այդ իսկ պատճառով արտասահմանական շատ ներդրողներ ստիպուած են դադարեցնել իրենց գործունէութիւնը: Դրանից բացի, ազգային ցածրագրերից հակառակուսի միջազգային մարդասիրական օգնութիւնը անհետ կորչում է: Եւրոպական Միութեան, Եւրոպայի Խորհրդի, ՄԱԿի գաղթականների գործերի գերագոյն վարչութեան ղեկավարները բազմիցս իրենց զայրոյթն են յայտնել Ազգային Կոմիտէում մարդասիրական օգնութեան անյարատեւ վերաբերելու եւ պահանջել են մանրակրկիտ հետաքննութեան անցկացում:

Հինգերորդ, Միացեալ Նահանգներին դուր չեն գալիս Հայաստան Ալիեւի կողմից ժողովրդավարութեան եւ իօսքի ազատութեան ճնշումը երկրում: Այսօր նախագահի հազարաւոր քաղաքական ընդդիմախօսներ ու գործիչներ յայտնուել են ճակատի ետեւում: Ալիեւին ու նրա ազգակցականներին քննադատող զան-

գուածային լրատուամիջոցներին, նախագահի շրջապատի նկատուութեան տակ գտնուող դատական մարմիններին միջոցով տուգանում են հարիւր միլիոնաւոր մանաթներով: Ինչի արդիւնքում ընդդիմադիր շատ թերթեր ու ամսագրեր ստիպուած են դադարեցնել իրենց տրամադրութիւնը: Ուաշինկթընի եւս չեն գալիս նաեւ խորհրդարանի եւ նախագահի ընտրութիւնների, ինչպէս նաեւ Կենտրոնական ընտրական յանձնախմբի մասին Ազգային Կոմիտէի օրէնքները, որոնք հանրաւորութիւն են տալիս ինքնախելիքի ցանկացած ընտրութիւնների արդիւնքները: Դրանից բացի, 1998 թուականի Հոկտեմբերին կաշառ ընտրութիւնների արդիւնքում Ալիեւի նախագահ ընտրուելը ԵԱՀԿ, Եւրոպայի Խորհրդի, Միացեալ Նահանգների ժողովրդավարութեան հիմնարկի եւ միջազգային ուրիշ կազմակերպութիւնների փորձագետների կողմից հանաչուեց անօրինական, իսկ նախագահական ընտրութիւնների արդիւնքները կեղծուած:

Վեցերորդ, Միացեալ Նահանգներին, ինչպէս նաեւ միջազգային ֆինանսական հաստատութիւններին շատ է անհանգստացնում իշխանութեան ժառանգորդութեան հարցը Ազգային Կոմիտէում: Ուաշինկթընը խիստ դիւրաբորբոք կերպով է վերաբերում երկրի նախագահի պաշտօնը իր որդուն յանձնելու Հայաստան Ալիեւի ջանքերին: Հանրապետութեան միշտ բնորոշ ջանքերին կուսակցութիւնները արդէն յայտարարել են, որ Երեւանի Ալիեւի փոխաւոր յայտարարելու դեպքում քաղաքական անհանգստութեան կոչ կ'անեն իրենց համախոհներին եւ կը սկսեն քաղաքացիական պատերազմ:

Իտալիայում բոլոր հակագամայնքները կանխատեսում են իշխանութեան փոփոխութիւն Ազգային Կոմիտէում, ինչը կարող է ապակայունացնել իրավիճակը ոչ միայն հանրապետութիւնում, այլեւ՝ ողջ Անդրկովկասում: Իրադարձութիւնների այսպիսի զարգացումը չի մտնում Ուաշինկթընի աշխարհաքաղաքական ծրագրերի մէջ, այդ իսկ պատճառով վերջին շրջանում Միացեալ Նահանգներին եւ Թուրքիայի յատուածադրուել են շարունակելու իրենց գործողութիւնները Ազգային Կոմիտէում, որպէսզի իշխանութեան փոփոխութեան գործընթացը հանրապետութիւնում դարձնեն սահուն եւ թոյլ չընտան իրավիճակի ապակայունացում շրջանում: Դատելով ազգային անվտանգութիւնը հրապար-

արկումներից՝ Ուաշինկթընը Ալիեւի փոխարեն նախապատրաստում է ազգային անվտանգութեան խորհրդարանի նախկին խօսնակ Ռասուլ Կուլիեւին, որը ներկայումս քաղաքական վտարանդուութեան մէջ է Միացեալ Նահանգներում:

Վերջ շարագրուած վարկածի առնչութեամբ տրամաբանական հարց է ծագում. արդէ՞ք Ռուսաստանը կը մնա յղիտորդի դերում. թէ՛ միջոցներ ձեռք կ'առնի իր ազդեցութիւնը Պաքուում վերականգնելու համար, նկատի ունենալով, որ Անդրկովկասը մտնում է Ռուսաստանի ազգամայրական ազգային շահերի գոտու մէջ: Ինչպէս արդէն նշուեց, Ազգային Կոմիտէի Անդրկովկասեան - Կասպիական - Կենտրոնական շրջանի բանալին է: Կը ցանկանալ յարեօք Ռուսաստանը կրկին տիրանալ այդ բանալուն:

Պէտք է ասել, որ այսօր արեւմտամէտ քաղաքականութիւնից հիասթափուել է ոչ միայն նախագահ Ալիեւը, այլեւ Ազգային Կոմիտէի անաչափ ընդդիմադիր կուսակցութիւնները, որոնք Արեւմուտքին եւ առաջին հերթին Միացեալ Նահանգներին մեղադրում են երկերեսանութեան, ոչ առարկայական լինելու երկակի չափանիշի քաղաքականութեան վերաբերմէ: Այս հանգամանքը ստեղծում է որոշակի պարապետութիւն, ինչն էլ հեեց կարող է լրացնել Ռուսաստանը: Մոսկուայում այսօր աւելի շատ հնարաւորութիւն ունի ամբարկուելու իր ազդեցութիւնը Անդրկովկասում, քան Ուաշինկթընը: Դրա համար նա պէտք է եականօրէն սըրբազրի իր քաղաքականութիւնը Անդրկովկասում եւ հանդէս չգալ որպէս Երեւանի ազգական դաշնակիցը, որի հետ Պաքուն գտնուում է պատերազմական վիճակի մէջ:

Ի տարբերութիւն իշխանութիւնների՝ Ազգային Կոմիտէի բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը հանդէս է գալիս հանրապետութեան Ռուսաստանի հետ սերտ համարկման օգտին: Այդ պատճառով, Ալիեւի ամերիկամետ վարչակարգը մոսկուայում մտով փոխելու դեպքում չի բացառում, որ Ազգային Կոմիտէի կողմից Ռուսաստանի Պիտաուսիայի, Ղարաբաղի, Խըրիզստանի եւ Տանիկստանի Մաքսիլին Միութեան մէջ եւ, հնարաւոր է, նոյնիսկ միացալ Ռուսաստանի եւ Պիտաուսիայի Միութեանը:

ՂԵՏՈՐ ԲՈՄԸՆՈՎ «Գոլու Արմենի»

ՀՈԳԵԿԱՆ ՏԱԳՆԱՊ ԵՒ ԲՈՒԺՈՒՄ

ԱՃատակաճ գարգացման ճամբուց վրայ կան պահեր, երբ մեզի կը թուի, որ խոր եւ մութ փոսի մը մէջ կ'իյնանք, եւ որ ոչ մէկ տեղ կը յաջողի՞ր լոյս գտնել: Այս է, որ կը կոչուի «հոգեկան տագնապ», որ տարբեր է հոգեբանական տեսութիւններու սահմանումներէն, նոյնիսկ եթէ իր մէջ կը պարունակէ զգացումներ եւ յուզումներ, որոնք հոգեբանութեան կողմէ կը նշուին իբրեւ «պատմաբանութեան» Այդ հոգեկան տագնապներուց կը վերաբերի ստորեւ համարաբար

տրուած յօդուածը, որ կը պատկանի Մաթիու Պլէյսի գրիչին: Մ. Պլէյս համակարգիչի մասնագետ եւ միաժամանակ գրող, երաժիշտ եւ բուժող (խօսքը չի վերաբերիր հոգեդարմանումի, այլ՝ ներուժի գոյութեան գիտական միայլ մակարդակի բուժումի): Պլէյս մասնաւորաբար կը հետաքրքրուի անհատական փոփոխութեան, երաժշտութեամբ դարձնումի երեւոյթներով, ինչպէս նաեւ՝ ձայնի, կշռոյթի, ներդաշնակութեան եւ բուժումի միջեւ գոյութիւն ունեցող կապով:

«Արդի ընկերութիւնը չի հասկնար եւ չ'ընդունիր հոգեկան տագնապները: Տագնապող բազմաթիւ անձեր գրեթէ ոչ մէկ օժանդակութիւն կը ստանան իրենց ընտանիքներէն, ընկերներէն կամ ընկերային հաստատութիւններէն», կը գրէ Մաթիու Պլէյս ներածական իր խօսքից մէջ. «Որեւէ տագնապ բուժուելու առիթ մըն է. սակայն այդ առիթը կրնանք փախցնել եթէ չ'ընդունինք անոր կարողականութիւնը: (...) Հոգեկան տագնապի ընձեռած բուժումի առիթէն օգտուելու համար

երբ պայմաններ անհրաժեշտ են՝ ա/ ճանչնալ տագնապը եւ ընդունիլ, որ անկախ առիթ մըն է, բ/ ստեղծուող փորձառութիւններու ընդմէջէն անցնելու իսկական կամքը ունենալ եւ գ/ պատրաստ ըլլալ իրականութիւնը ընդունելու, որքան ալ որ անհաճոյ թուի անիկա»:

Այս էջով տրուած յօդուածին մէջ Պլէյս կը ներկայացնէ իր անհատական փորձառութեան եւ «ճամբորդութեան» ծնած մտածումները եւ պարունակը:

ԲՈՒԺՆԵԼ «ՇՈՒԲ»Ը

1. ԲՈՒԺՈՒՄ. «ԵՍ»Ր ԵՒ ՀՈՒԲՐ

Բուժում կը նշանակէ «ամրողութիւն կազմել» եւ արդէն իսկ ընդունուած իրողութիւն է, որ միակ իսկական բուժումը, որ մենք կրնանք կատարել, ինքզինք բուժելն է: Այս մէկը կը նշանակէ, որ երբ մենք մեզ կը բուժենք՝ «մենք մեզ ամրողել կը վերածենք», ինչ որ ենթադրել կու տայ, որ մենք ներկայիս «կոտորակուած» վիճակի մէջ ենք:

Մենք մեզ կոտորակուած կը տեսնենք հետեւեալ ձևով. բաժնուած ենք երկու հիմնական մասերու. առաջին կէտը այն «եսն է, որ մենք գիտենք, որ ենք» (այսինքն՝ մեր ինքնութեան մասին մեր պատկերացումը), եւ երկրորդ՝ «չուք» (այն բոլոր, որ ըստ մեր ինքնապատկերացումին, մեր հիւսիսներէն մաս չեն կազմեր): Մեզմէ շատերուն համար դժուար է երեւակայել, որ մենք «ենք» այն բոլորը, որ գիտենք, թէ չենք: Մեր ինքնութեան մասին հաստատուած մեր պատկերացումը չարտօնել, որ մենք կարենանք երեւակայել, որ մենք մրափաճանակ ուրիշ էութիւն մըն ենք:

Արժանք ունեւոր աւելի յստակ դարձնելու համար, մեր գիտակից ինքնապատկերացումը պիտի կոչենք «եսը», իսկ «եսը»-ն «չուք»-ը ընդգրկող ամրողութիւնը պիտի կոչենք «ինք»:

2. ԶԱՆՉՆԱԿ ԸՈՒԲՐ

Մեզմէ իւրաքանչիւրը ունի զգացումներ եւ յուզումներ, որոնց ընտելացած է, եւ գործ կ'ընդունի իրրեւ իր սեփական ապրումները: Այս պատճառով է, որ կը կարծենք, թէ «կը խնայեմանք» կամ «բան»-ը կը պատահի մեզին, երբ շատ անտոյժոր, մեզի համար տարբերակ չզգացումներ կամ հակազդեցութիւններ կ'ունենանք: Այսուհանդերձ գոյութիւն ունի հարցին աւելի դրական կերպով նայելու մտտեղծում: Պէտք է ինչպէս, որ այն, ինչ որ շատ անտոյժոր կ'ընկնի ըլլալ ձեզի համար մաս կը կազմէ ձեր շուքին. եւ երբ շուքին մասնիկներ կը սկսին «ես»-ին ընդմէջէն դուրս գալ, այդ մէկը բուժում է, որովհետեւ բուժումը ամրողութիւն կազմել է եւ ձեր «եսը»-ն եւ շուքը միացնելով է, որ կարելի է հասնել «ինք»-ին:

Կայ նաեւ շուքը ձանձնալու այլ լաւ ձև մը. մեր շուքը այն բոլոր զգացումներն են, գործ կը մերժենք, կը հերքենք, կը վախենաք, կ'ատենք, կ'արհամարհենք եւ կ'ուզենք, որ շատ արագ անհետանան: Այս կէտը շատ կարեւոր է, որովհետեւ արդի ընկերութիւնը եւ մեր ծնողները մեզի կը սորվեցնեն բնաւ չմտնել մեր շուքին:

3. ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՆԱՐՈՒԿԱՆ ՀԱՅՆԵՆ

Մարդիկ որոնք մեզմէ շատ տարբեր են յաճախ մեզ անհանգիստ կ'ընեն: Օրինակ՝ եթէ դուք ձեզ կը նկատէք «բաւ» կամ «յարգելի» անձ մը, անհանգիստ կը զգաք երբ կը գտնուիք «կոպիտ» անձի մը ներկայութեան: Յստակ է, որ եթէ մեր «եսը» կը նոյնանայ «յարգելիութեան» հետ, ուրեմն «կոպիտութիւնը» մնացած է մեր շուքին մէջ եւ հետեւաբար մենք գայն կը մերժենք եւ անրդեւութիւն կը նկատենք:

Ինչ են այն զգացումները, որոնք կը ծնին ձեր մէջ, երբ ուրիշ մը անհանգիստ ակնարկութիւններ կ'ընէ ձեզի. վախ. բարկութիւն. կը զգա՞ք, որ կ'ուզէք շատ արագ դուրս գալ այդ կացութեանէն: Եթէ «ես» պատասխանեցիք այս հարցումներէն որեւէ մէկուն, ուրեմն կրցաք ձանձնալ եւ ընդունիլ ձեր շուքին մէկ մասը: Եւ շուքը այն յատկանիշներն ու վերաբերումներն են, որոնք ձեզ անհանգիստ զգացուցին:

Այս պատճառով է, որ յարաբերութիւնները «հայելի» կը կոչուին. մենք հակում ունինք ուրիշի մէջ տեսնելու այն յատկանիշները, որոնք մեր շուքին մաս կը կազմեն: Մեր յարաբերութիւնները մեր «ես»-ին հայելին չեն դառնար, այլ մեր շուքին, մեր «ինք»-ի ձանձնուած բաժնին: Այս հայելին, մեր անհանգստութեան զգացումներուն հետ միասնաբար մեզի կ'օգնէ, որ տեսնենք եւ ընդունինք մեր շուքը, ինչ որ անհրաժեշտ է հոգեկան բուժումի՝ ամրողացումի համար:

4. ՄԵՐ ԿԱՐԵՎՆԵՐ ԽԱՂԸ

Մենք բոլորս ալ ծանօթ ենք մեղադրանքին: Անիկա այն բանն է, գործնաւ չենք պահանջեր, սակայն միշտ ալ ձերտըն կը բաժնենք: Մեղադրանքը գործնական բան մըն է, որ կը ծածկէ մեր շուքին հակազդելու մերտարբեր ձևերը՝ հերքում, մերժում, վախ, արհամարհանք եւ այլն:

Խորքին մէջ, մեղադրանքը արտաձգում մըն է. մեր «եսը» կ'ըսէ՝ «գնա՛ հեռու, չեզ չեմ սիրեր, դու ինչ չես», այլ խօսքով՝ «բարեւ շուք»: Մեղադրանքին ընդհանրապէս կ'ընկերանան անհանգիստ զգացումներ եւ մենք կը փորձենք հեռանալ այդ նեղութեան աղբիւրէն, որ մեր «ես»-ին համար կը թուի արտաքին ըլլալ: Սակայն մեր շուքը կը նեղացնէ մեր «եսը» ու պարզապէս արմուկնաւ «ես»-ի գոյութեան տարածումը շուքին հակադրուիլն է. անիկա կ'անհետանայ (եւ իրեն հետ կ'անհետանան նաեւ շուքին դէմ յանդիման ստեղծուած անհանգիստ զգացումները), երբ մենք կ'ընդունինք մեր շուքը իրրեւ այդ պիտին եւ կ'ապրինք իրրեւ ամրողութիւն:

Երբեմն մենք մեզ նաեւ կը մեղադրենք ինչո՞ւ. որովհետեւ երբեմն մենք մեր շուքը կ'արտայայտենք (օրինակ՝ երբ «կը համարձակինք» մեր խորաբարկութիւնը կամ վախը իսկապէս ըսել) եւ մեր «եսը» այդ պատճառով կը վախնայ եւ մեղադրանքը դէպի մեզի կ'ուղղէ. «եսը» անաչառ է, երբ հարցը կը վերաբերի իր նախընտրած գրադուժին՝ պատիժին...:

5. ՊԱՐԸ ԳԵՏ ՄԸ ՉԷ

Մենք բոլորս գիտենք, թէ ինչ է ժխտումը, եւ բոլորս ալ մասնագէտներ ենք գայն ձանձնալու ամէն մարդու մօտ՝ մեզմէ գատ: Այս իրողութեան պատճառը այն է, որ ժխտումը, մեղադրանքին նման, մաս կը կազմէ «ես»-ի գոյատեւման մարտավարութիւններուն: «Ես»-ը կարիքը կը զգայ բոլոր ձեւերով ժխտելու շուքին, յուժութիւնը. հետաքրքրական է, որ այս ժխտումին պատճառը ինքնին այն է, որ շուքը մաս կը կազմէ մեր ինքնութեան: Երբ անձ մը «բուժուի», այսինքն՝ ամրողական, «եսը» անգործութեան կը մատնուի, որովհետեւ այլեւս կ'անհետանայ շուքին անկողնի զգացումը կարիքը. հասկնալի է, թէ ինչո՞ւ մեր «եսը» կը փորձէ անպայման մեզ համոզել, որ պէտք է հեռու մնալ եւ մերժել ամէն բան, որ մեր շուքին կու գայ:

Թէ՛նք երբեմն դժուար է անդրադառնալ, որ մեր տուեալ վերաբերումը կամ հակազդեցութիւնը խորքին մէջ մեր շուքի գոյութեան ժխտումն է, այսուհանդերձ այդ մէկը հարց մը չէ: Յարաբերութիւններու մեր կախարհական Հայելին է մեր Անհանգիստ Ջգացումները մեզի կ'օգնեն, որ յիշուած մեր բացայտները մեզի նենք մեր ժխտումը:

* * *

Մենք կ'ուզենք բուժուիլ, այսինքն ըլլալ մեր հոգեկան ամրողութիւնը՝ ձանձնալով եւ վերջի-ջիւղով մեր շուքը: Պէտք է գիտնալ, որ մեր «ես»-ին գործադրած մարտավարութիւններուն պատճառով մենք կը կարծենք, որ շուքը մեզմէ դուրս կը գտնուի:

6. ՄԵՐ ԵՒ ՄԵՐԱԳՐԱՆՔ

Մեր մեծամասնութիւնը պիտի ուզէր սիրոյ հետ ունենալ այն յարաբերութիւնը, որ ունինք մեղադրանքին հետ. այսինքն՝ միշտ տալ, առանց զգալու անոր պէտքը: Սկըր այն բանն է, որ կը զգանք, երբ մենք մեր իրականութիւնը կը ձանձնանք եւ կը յիշենք, որովհետեւ սկըր մեր իսկական էութիւնն է: Երբ մենք մեզ կը տեսնենք ուրիշներուն մէջ, անոնց նկատմամբ սկը կը ուզանք: Երբ մենք մեզ ընդունինք այնպէս, ինչպէս որ ենք, մենք մեր նկատմամբ նաեւ սկը կը զգանք:

Մեղադրանքը կը գործէ հակառակ ուղղութեամբ: Մենք այդ ապրումը կ'ունենանք, երբ կը միտենք մեր հոգեկան մէկ մասնիկը՝ շուքը:

Հետեւաբար յստակ է, որ սկըր եւ մեղադրանքը չեն կրնար գոյակցիլ: Երբ գրադեմ ենք ժխտումով, որ իրականութիւնը մը մեզի մաս կը կազմէ (մեղադրելով), անկարելի է միաժամանակ ձանձնալ եւ ընդունիլ, որ անիկա մերն է (սիրելի):

7. ՊԱՐ ԸՈՒԲԵՐՈՒՆ ՀԵՏ

Փորձենք գործնականորէն մտնել այս հասկացողութեան: Իրեւակայեցէք կացութիւն մը, ուր անձ մը ձեզ իսկապէս կը ցաւենք կամ կը բարկացնէ, եւ դուք կը զգաք, որ մեղադրելիք այլ բան չէք կրնար ընել. որքան կ'ուզէք դուրս գալ այդ իրավիճակէն, բայց չէք յաջողիր խուսափիլ վրէժնիցի, մեղադրող զգացումն է մտնել ներուժի, ընդունումի, հասկացողութեան, խաղաղութեան եւ սիրոյ տարածքին մէջ:

Այս մէկը կացութիւն մըն է, որ բուժում կը խնդրէ: Բուժումը կարելի դարձնելու համար անհրաժեշտ է անոր կարիքը զգալ եւ իսկապէս ուզել ձեր բացառապէս մեղադրանքին, վախէն, բարկութեանն եւ գանձի փոխանակել սիրով, կարեկցանքով եւ բմբռնումով: Պարզապէս ուզելը

այս պարագային բաւարար է, նոյնիսկ եթէ անկարող կը զգաք տակաւին դուք ձեզ կամ չէք գիտեր ինչ ընել:

Յիշեցէ՛ք, որ մեղադրանքը ձեր «ես»-ին արտայայտութիւնն է: Եւ շուքի խնդրոյ առարկայ մասը ճիշդ այն է, ինչ որ ուրիշին ըսածին կամ ըրածին մէջ ձեզի ցաւ պատճառեց: Մեղադրանքը զգացումը խորքին մէջ ձեր սեփական ժխտումն է, որ դուք նաեւ կրնաք նույն ձևով վերաբերիլ ուրիշին եւ մտնաւով դուք ձեր նկատմամբ: Այս իրողութիւնը ամրողութիւն հասնելու է ընդունելու շատ կարեւոր է՝ բուժումի յաջող քայլերուն համար:

Նկատի ունեցէ՛ք նաեւ, որ դուք հաւանաբար բազմաթիւ դատումներ ունիք ձեր մէջ՝ ցաւցնող կամ բարկացնող վերաբերումներու մասին: Այդ դատումներուն հիմնաւորումը այն է, որ դուք բնաւ նոյն ձևով պիտի չ'ապրուէք ուրիշին հետ: Այս ձեւի դատումը նոյնպէս կը պահպանէ ձեր շուքին եւ ինքնութեան զգացումին միջեւ պատշաճ կախարհականութեան զգացումը: Կանխամտածուած դատումները նաեւ մեր «ես»-ին կ'արտօնեն, որ ինքզինք արդարացուած եւ իրաւացի զգայ:

8. ՆԵՐՔԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԵՂՈՒՄ

Խօսեցանք ներկայ վայրկեանին մէջ դուք ձեզ վերջիցի, հասկնալու եւ ընդունելու մասին: Թող յստակ ըլլայ, որ պէտք է փորձել շար կամ ցաւցնող դառնայ, այլ՝ ընդունիլ, որ նման վերաբերում արդէն իսկ մաս կը կազմէ ձեր նկատման: Պէտք է պարզապէս հասկնալ, որ ինչպէս կը պատահին նշեալ վերաբերումները:

Այս մէկը ընելու յաւանքն ձեռն է դուք ձեզի թելոյ տալ, որ պեղէք ձեր սեփական շար եւ կամ ցաւցնող մտքերը: Մեր մեծամասնութիւնը կը սարսափի այս հեռանկարին, սակայն մինչեւ հիմա յստակ դարձած պէտք է ըլլայ, որ բանէ մը արտափոխ կամ խուսափիլ կը նշանակէ, որ ձեր «եսը» կ'ուզէ այդ պեղումը արգիլել:

Ձեր սեփական արդարացած կամ ցաւաւիթ մտքերը պեղելու ուժի եւ բուժումի աղբիւր է, որովհետեւ անիկա ձեզ ուղղակիորէն պիտի տանի ձեր շուքին խնդրոյ առարկայ մասնիկին: Այսուհանդերձ պէտք է իսկապէս ուզէք ձեր ներաշխարհին մէջ ձեր մտքերը պատեղելու: Ընդունող մտտեղծումը շատ կարեւոր է, որովհետեւ այն, ինչ որ կը պեղէք, մեր էութիւնն է:

Երբ կ'ընք մտնել ձեր սեփական բարկութիւնը, ատելութիւնը կամ դատումները եւ գանձի կ'ընդունիք, կը նշանակէ, որ կը վերջիցիք ձեր հոգեկան այս «կոտոր», գործ մերժած եւ ձեզմէ յաճախ չ'էք: Երբ կ'ընք մեր իրականութիւնը անարտիւն հասնիլ, այլեւս կարիքը պիտի չզգաք այդ ժխտական միտքերը եւ պատիւները ուրիշին մէջ արտաձգելու. հետեւաբար ուրիշներ կը բարկանան, տակաւին կարող պիտի ըլլաք ընդունելու եւ հասկնալու գանձից, այնպէս, ինչպէս ընդունած եւ հասկցած էք դուք ձեզ:

Հասկացողութիւնը եւ կարեկցանքը ուրիշին նկատմամբ կրնաք զգալ միայն այն տեսնել, երբ դուք նոյն մտտեղծում ունիք դուք ձեզի հանդէպ: Այսպէս ամէն բան ժխտում եւ մեղադրանք կրորնայ ըլլայ:

9. ՏԵՂԵՐՈՒ ՓՈՒՅԱՆԱԿՈՒՄ

«Պար» շուքերուն հետ՝ բաժնին մէջ իրրեւ օրինակ առիթ կացութիւն մը, երբ դուք բարկացած էք կամ ցաւած՝ ուրիշի մը վերաբերումն է, եւ փորձեցիք այդ կացութիւնը օգտագործել դուք ձեր ժխտումը կամ մեղադրանքը տեսնելու համար:

Այսինքն շրջան կացութիւնը եւ երեւակայենք, որ ուրիշ մը բարկացած կամ ցաւած է ձեր մէկ վերաբերումին պատճառով: Ենթադրենք, որ դուք ակամայ այդ վերաբերումը ունեցած էք եւ ամրողութիւն անակնկալի կու գաք մեր խօսակցին հակազդեցութեան: Ձեզի համար յստակ է, որ ան չ'ափազանց զգայուն կերպով կը մտնեայ կացութեան, անտեղի կերպով կը վերաբերուի եւ իր զգացումներուն պատասխանատուութիւնը չի ստանձնել: Ան պարզապէս ձեզ կը մեղադրէ բանի մը համար:

Նման կացութիւններու մէջ շատ դիւրին է «պայտիլ» եւ ձգել, որ ձեր խօսակցը «իր գլխուն ճարին նայի»: Այս մէկը երբեմն նոյնիսկ յարմար գոյն վերաբերումն է: Բայց մի՛ մոռնաք, որ դուք անընդհատ կը ձգտիք ձեր իսկ բուժումին եւ ձեր յարաբերութիւնները այս գծով հայելին ներքէն: Թերեւս նշեալ կացութեան մէջ դուք կը զգաք, որ դուք չէք մեղադրել ձեր խօսակցը եւ կրնաք պատահիլ, որ իրականութիւնն է այդ մէկը: Սակայն կայ շատ կարեւոր բան մը, գոր պէտք է տեսնել. տակաւին անձանց պատճառի մը համար դուք ակնկարեկանաբար եւ հասկացող

դութիւնը չէք «կիրարկել» ձեր դիմացինին հետ եւ կը բաւարարուիք դուք ձեզ արդարացի զգալով:

Հիմա նայեցէ՛ք, թէ ինչպէս հակազդեցիք այս նկատողութեան: Կ'ամ արդարացի եւ յարմար գտաք ձեր որդեգրած վերաբերումը, կամ ալ ամէնքաք, որ աւելի հասկցող, աւելի սիրող չէք գտնուած: Առաջինը՝ դուք ձեզ զատել եւ պաշտպանել է («ճիշդ եմ»), իսկ երկրորդը՝ դուք ձեզ զատել եւ մեղադրել («սխալ եմ»): Կարեւոր է կտոր այն է, որ պէտք է տեսնել, որ երկու հակազդեցութիւններն ալ ինքնադատումներ են, «ես»-ին արարածը՝ շուքը հեռու պահելու իր յաւիտենական ձգտիլ մէջ:

Վերադառնալով մեր օրինակին՝ ենթադրենք, որ տեղի ունեցածը միայն թիւրքմբունում մը չէր, այլ ձեր խօսակցը իսկապէս վիրաւորուած է ձեր վերաբերումն է եւ ձեզ ուղղակի կ'ընէ, թէ ինչն էր ձեզի մեղացնողը. սակայն դուք անկարող կը զգաք ներողութիւն խնդրելու կամ ըստաւոր ընդունելու եւ կարեկցելու: Տակաւին կը մտածել, որ անոր հակազդեցութիւնը անտեղի էր եւ անկեղծօրէն ներողութիւն խնդրել չէք կրնար: Հաւանաբար շատ հանդարտ, տրամաբանող եւ հեռու կը զգաք, ինչպէս նաեւ կը մերժէք անոր մեղադրանքին վտանգը: Այս բոլորը յաւանանք են, որոնք ցոյց կու տան, որ տակաւին պէտք է շարունակել ձեր սեփական բուժումը:



Այս կացութեան մէջ դուք կը մերժեք ընդունելի, որ ցաւցնուած էք ուրիշը: Կը շարունակէք դուք ձեզի կրկնել, որ պատահածը իսկապէս ձեզի չ'անընչուի, որ ձեր խօսակցը կը չ'ափազանցէ, որ ան շատ զգայուն է, անտեղի բանք կ'երեւակայի եւ այլն: Այսուհանդերձ այս պարզ իրողութիւնը, որ դուք կը գտնուիք այդ կացութեան մէջ, կը նշանակէ, որ դուք այնտեղ սորվելիք բան մը ունիք:

10. ԱՄԷԼԵՆ ՄԵԾ ԸՈՒԲՐ

Պէտք է տեսնել, որ ուրիշ անձ մը կրնայ վիրաւորուել մեր վերաբերումէն, նոյնիսկ եթէ մենք նման ոչ մէկ նպատակ ունինք կամ կ'ընենք այն լարն, որուն խորապէս համոզուած ենք: Այլ խօսքով, անկարող ենք ամրողութիւն առաջարկել ունիլու այն կացութիւններուն, երբ ուրիշը կրնայ ցաւելի մեր պատճառով: Այս իրողութիւնը ընդունելու շատ դժուար է, որովհետեւ անիկա կը նշանակէ, որ մենք նաեւ կրնանք ցաւ զգալ նոյնիսկ, այն պարագային, երբ ուրիշը մեզի ցաւցրելու ոչ մէկ նպատակ ունի: «Ես»-ը շուքը այս իրականութեան հաւատար, որովհետեւ անիկա մտածել կու տայ, որ մեր սեփական ցաւը մեզմէ կը ծնի: «Ես»-ի ամէնէն կարեւոր սկզբունքներն է մէկը գոհի հոգեվիճակն է, եւ գոհ մը պէտք է մեղադրել մէկուն: Զոհի իրավիճակին հիմնական կէտը անկարողութիւնն է, եւ ուրիշը ցաւցնող «կարողութիւնը» պէտք է արտաձգուի ուրիշ բանի մը կամ անձի մը վրայ՝ շուքին վրայ:

Պատկերացուցէ՛ք ձեր «ես»-ը, որ ինքզինք իրրե

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ն



ՖԻԿՕ ՍԿՍԱԻ ԼՈՒՐԶ ՓՈՐՁԵՐՈՒ



Ֆիկո (Կեդրոնը)՝ շրջապատում իր Երր խմբակիցներով, որոնց կարգի՝ Մուհիթի, Մաքմանաման, Սանգչե, Կոնգալե և Սալկատո:

Ռեալ Մատրիտի միացած փոքրուկայիցի միջազգային մարզիկ Լուիս Ֆիկո շաբաթակիցներին արդեն իսկ սկսում էր կանոնադր փորձերուն, անցնել Կիրակի օր ծանանել է ետք Սպանիոյ մայրաքաղաքը:

Ռեալի մնացելով միջազգային մարզիկներուն նման, Ֆիկո եւ յաւելեալ շաբաթ մը արձակուրդ առած էր, որովհետեւ անոնք իրենց մասնակցութիւնը բերած էին Եւրո-2000ի մրցաշարին:

Նշենք, թէ Ֆիկո մարզիկներու փոխանցման սակարանին մէջ նոր մրցանիշ մը հաստատեց, երբ փոխան 56 միլիոն տոլարի Պարսելոնայէն միացաւ Ռեալ Մատրիտի եւ այսպիսով դարձաւ աշխարհի ամենէն առջ մարզիկը:

Մատրիտի «Պարսիսա» օգակալներ ծամանելէ ետք, թղթակիցներուն հետ իր ունեցած հարցադրոյցին ընթացքին Ֆիկո ըսաւ. «Վտահաբար կ'ուզեմ լաւ արդիւնք արձանագրել նոր կազմին հետ, սակայն այդ մէկը յաջողցնելու համար անխոնջ աշխատանքի կարիք ունիմ: Սակայն կ'ուզեմ վստահեցնել բոլորին, որ Պարսելոնայի արձանագրած յաջողութիւններս պիտի շարունակուին նաեւ հոս, «Սասիֆալօ Պէրնայէօ»ի մէջ»:

Ֆիկոյի առաջին օրուան փորձերուն ներկայ եղող Ռեալի քանի մը հարիւր համակիրները ծափահարութիւններով դիմաւորեցին իրենց սկումբին միացած նոր մարզիկը, թէեւ անոնք նախապէս կը հայտնէին անոր, նկատի ունենալով, որ ան մաս կը կազմէր իրենց սկումբին «սիւլետի» թշնամիին՝ Պարսելոնայի...:

Ֆիկոյի խմբակից անգլիացի միջնապահ Սթիւ Մաքմանաման երէկ մերժեց շրջան ընդոյ այն տարածանութիւնները, թէ փոքրուկայիցիին ծամանումը պատճառ պիտի դասնայ իր շուրջի մէջ մնալուն, կամ Մատրիտէն հեռանալուն:

Սպանական եւ անգլիական մամուլին համաձայն, Մաքմանաման շատ հայախաբար պիտի վերադառնայ իր հայրենիքը՝ Անգլիոյ, միայն այն համար Միտրլուպոնոյի կամ Արսենալի:

Անցեալ եղանակէն պատ փախստունով մը Լիվըրփուլէն Ռեալ Մատրիտին միացած Մաքմանաման հերքեց մամուլին կողմէ կատարուած այս յայտարարութիւնը, ըսելով, թէ ոչ մէկ պատճառ կայ «Պէրնայէօ»էն իր հեռացման:

ՍԻՒՔԻՐ ՀՐԱՎԵՇՏ ՏՈՒԱԻ ԱՐՍԵՆԱԼԻՆ

Խրուած միջազգային մարզիկ Տաւոր Սիւքեր, երէկ վերջին անգամ ըլլալով հրաժեշտ տուաւ իր կազմին՝ Արսենալի, շնորհակալութիւն յայտնեց մարզիչ Արսէն Վենկերի, որ իրեն առիթ տուած էր Անգլիոյ յաջտեղուն մէջ հանդիս գալու, ինչպէս նաեւ ներողամտութիւն խնդրեց անցեալ եղանակին ետ: Է. Էֆ. Ա. ի բաժակի մրցաշարին ընթացքին իր վրիպած փետլթիլին համար:

Անցեալ Յունիսի «Հալլըրի» լքած եւ ազատ փոխանցումով մը Ռեալ Մատրիտին միացած Սիւքեր իր խոսքին մէջ ըսաւ նաեւ, թէ ինքզինք ուրախ կ'ըզայ, որ յաջողած է Լոնտոն կեցուցից համար մեծ թիւով համակիրներ եւ բարեկամներ ունենալ:

1998ին աշխարհի «Ոսկեայ կօշիկ»ին տիրացած Սիւքեր իր կազմին հետ յաջողեցաւ նշանակել 11 կող, հակառակ որ ան ընդհանրապէս նկատի կ'առնուէր իրրեւ պահանջարկ մարզիկ, Ֆրանսացի թիւերի Հանրիկ Ներկայութեան:

Անցեալ Մայիս 17ին ետ: Է. Էֆ. Ա. ի բաժակի մրցաշարին ընթացքին իր ձախողութեան անդրադառնալով, ան ըսաւ, որ փետլթիլին իր նպատակին չհասցնելը իրեն համար պիտի ըլլայ ֆուլթայլիտի ասպարէզին ամենէն վատ յիշատակներէն մէկը, մասնաւոր, որ իր վերջին մրցումը կը կատարէր Արսենալի հետ:

ԷՏՈՒՆՏՈ ՄԻԱՑԱՒ ԱՆՆՈՍԻ

Պրագիցի յառաջապահ Էտմունտ, որ իր կոշտ խաղարկութեան պատճառով ճանչցուած է իրրեւ «անասուն», երէկ փոխ տրուեցաւ Փեյլի նախկին սկումբին՝ Սանթոսի: Ան խոստացած է ըլլալ նուազ խնդրաշարոյց: Սանթոսի միանալով ան ըսաւ. «Միայնիւր մարդկային է, սակայն ես պէտք եղածն աւելի սխալած էի: Յուսամ չի կրկնուէր նման բան: Նոր սկումբին միանալով պիտի փորձեմ ամենէն մօտիկ ապագային տիրողոս մը շահիլ անոր հետ»:

Հակառակ անոր, որ ան վասքօ տա կամայն վտարած էր՝ փոխ նախագահ Էտմունտ Միլանտայի կողմէ, իր անկարգապահ ըլլալուն պատճառով, այսուհանդերձ անոր նոր սկումբին շուրջ երկու հազար համակիրները դիմաւորելու եկած էին Էտմունտին:

Սանթոս, որ 1984էն ի վեր, որեւէ տիտղոսի չէ կրցած տիրանալ, այսպիսով կը դառնայ Էտմունտոյ վեցերորդ սկումբը (կարգալիակեան), որուն ան կը միանայ: Էտմունտ, որ մաս կը կազմէր Բալթիկի, Քոթինթինայի, Տրամենկոյի եւ Ֆլորենթինայի, իր նոր սկումբին միանալով կը խոստանայ ամէն կարելին ընել նախ գուսպ եւ արիւնակելի մարզիկ մը ըլլալու, ապա ամէն ճիգ ի գործ դնելու, որպէսզի Սանթոս փառքի օրերուն վերադառնայ:

Միջոցառում համար, սակայն, հարցական կը թուի ըլլալ, թէ ան պիտի կարենա՞յ խոստումին տէր ըլլալ, թէ հոս եւս պիտի շարունակուի միեւնոյն յանկերգը...:

ՕԼԻՎԷՅՐԱ ԴԱՐՁԵԱԼ ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ՄԱՐԶԻՉ

Փորթուգալի ֆուտպոլի ազգային խումբին նախկին մարզիչը՝ Լուիս Օլիվէյրա երէկ վերստին ստանձնեց ազգային խումբին մարզիչի պաշտօնը, յաջորդելով Հումպերթօ Քոէլիոյի, որ Եւրո-2000ի մրցաշարին աւարտին ներկայացուցած էր հրաժարականը, Ֆրանսային իր կազմին կրած պարտութենէն ետք (կիսաւարտական):

Օլիվէյրա, որուն ամբողջական անունն է Անթոնիօ Լուիս Սալվեյրա Ռիպէյրօ Օլիվէյրա, նախապէս Փորթուգալի մարզիչ եղած էր երկու տարի՝ 1994էն 1996, սակայն Եւրո-96ի մրցաշարին Զեխիայէն իր կազմին կրած պարտութենէն ետք (քառորդ կիսաւարտական) ներկայացուցած էր իր հրաժարականը:

Փորթուգալի ֆուտպոլի ֆետերասիոնին կողմէ անոր նշանակումը շատոնց կակրնկալուէր, թէեւ ազգային խումբին նախկին մէկ մարզիչին անունը եւս (Քարլոս Քուիրոս) կը յիշատակուէր:

Փորթուգալի անոր արձանագրած յաջողութիւնները յաւելալ պատճառ դարձան, որ Օլիվէյրա ըլլալ Քոէլի-

ոյի յաջորդը, իր կազմը առաջնորդելու համար 2002ի Մոնտիալիս, որ տեղի պիտի ունենայ Ճապոնի եւ հարավային Բրազիլի մէջ: Չտուժի մրցումներուն լաւ արդիւնքներ արձանագրելու համար Օլիվէյրա անմիջապէս պիտի սկսի իր

աշխատանքներուն: Ան մարզիկներուն «փնտռուքի» աշխատանքով պիտի չչարչարուի անշուշտ, որովհետեւ Եւրո-2000ի մրցաշարին Փորթուգալ փաստած էր, որ ունի Կորաուր կազմ մը, որ փոփոխութեան չի կարօտիր:

ՊԱՅԷՐՆ ՄԻՆԻՆ ՇԱՏԵՑԱԻ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԸ

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պունտըպիկա) 2000-2001 եղանակին նախօրեակին, ախոյեան Պայէրն Մինխի արդէն իսկ շահեցաւ իր առաջին տիտղոսը՝ Լիկայի բաժակը եւ մէկ միլիոն տոլար, երբ երէկ, աւարտական մրցումին, որ տեղի ունեցաւ Լեյքըրուպընի մէջ, 5-1 արդիւնքով պարտութեան մատնեց Վերթա Պերլիը՝ 12 հազար համակիրներու ներկայութեան:

Յառաջիկայ Օգոստոս 12ին, Պայէրն դարձեալ իր դէմ պիտի ունենայ Վերթա Պերլիը, երբ կը սկսի Գերմանիոյ ախոյեանութեան 2000-2001 եղանակը:

Հակառակ հինգ կող նշանակելուն, սակայն, Պայէրնի մարզիկները բաւական ուշացան փառատօնին, որովհետեւ մինչեւ 50րդ վայրկեանը մրցումը կ'ընթանար 0-0 արդիւնքով: Այսպիսով Յիլըր հեթորիք մը իրագործեց (50րդ, 67րդ եւ 85րդ), իսկ մնացեալ կողեր նշանակեցին Քարսթըն Եանքըր (53րդ) եւ Էտոֆուր Սվերիսըն (57րդ) սխալմամբ իր բերդէն ներս: Վերթայի կողը նշանակեց Քայ Միքսթ (61րդ):

Իր արձանագրած այս յաջողութեան ետք, Պայէրն Մինխի յաջողեցաւ մրցանիշ մը հաստատել, յաջորդաբար չորրորդ տարին ըլլալով տիւրանալով տիտղոսին: Գերմանիոյ Լիկայի բաժակը տեղի կ'ունենայ իւրաքանչիւր եղանակին աւարտին, առաջին վեց դիրքերը գրաւող կազմերուն միջեւ:

ԼՈՒՐԵՐ՝ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԷՆ

•1999-2000 եղանակի աւարտին Բ. դասակարգէն առաջին բարձրացած ֆրանսական Էլի խումբը Ա. դասակարգ մնալու համար բաւական դժուարութիւններու առջեւ պիտի գտնուի ըստ երեւոյթին, որովհետեւ հիմնական բերդագրի թեղի Ռիշեր, որ արեւ փորձերու ընթացքին վիրաւորուեցաւ, մինչեւ եղանակին աւարտը շատ հաւանաբար չկարենայ դաշտ ներկայանալ:

25 տարեկան բերդագրի պաշտ, որ այսօր պիտի ենթարկուի վիրաբուժութեան, կը նկատուի իր խումբին ամենէն աւելի փորձառութիւն ունեցող մարզիկներէն մէկը:

Տակաւին անցեալ Յունիսին Պորտուգալի Լիլի փոխանցուած Ռիշեր անցեալ շաբաթ, սակայն անոր գանձելիք ամսականին շուրջ հասցում ըլլալով կրած էր իր նոր կազմին շապիկը, Մոնաքոյի դէմ տեղի ունեցած ախոյեանութեան Ա. հասկարգումի մրցումին (1-1):

Այժմ խումբին յոյսեր կապուած պիտի ըլլան պահեստի բերդագրի Կրեկորի Ռիսպիլի, որ պիտի ըլլայ Ռիշերը փոխարինողը:

•ՄԱՐՍԷՅԻ պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ գրեթէ ամբողջացուցած են պրապիլի յառաջապահ Մարսելիսիոյ փոխանցման կարգադրութիւնները եւ հաւանաբար ան վաղը պայմանագրութիւն մը ստորագրէ ֆրանսական կազմին հետ:

24 տարեկան պրապիլիսի, որուն փոխանցումը Մարսելի պիտի արժէ 8 միլիոն տոլար, շատ հաւանական է, որ չորս տարուան պայմանագրութիւն մը

ստորագրէ: Ման Փաուլսի մաս կազմող Մարսելիսի անցեալ եղանակին 16 կող նշանակեց իր կազմին հետ:

Մարսելիսի, որուն ամբողջական անունն է Մարսելո Տոս Սանտի գտնուի ըստ երեւոյթին, որովհետեւ հիմնական բերդագրի թեղի Ռիշեր, որ այս եղանակին կը միանայ Ֆրանսայի ամենէն մեծ ժողովրդականութիւն ունեցող կազմին, միջնապահ Ատրիստիսի ետք, որ փոխանցուած էր Ալթեթիքօ Փարսիսիէն:

Մարսելի թեքնիք հարցերուն պատասխանատու եւ նախկին մարզիկ Մարսել Տիպ իր կատարած հարցազրոյցին ընթացքին ըսաւ, որ սկզբունքով անոր փոխանցումը տեղի պիտի ունենար անցեալ շաբաթ, սակայն անոր գանձելիք ամսականին շուրջ հասցում ըլլալով կրած էր իր նոր կազմին շապիկը, Մոնաքոյի դէմ տեղի ունեցած ախոյեանութեան Ա. հասկարգումի մրցումին (1-1):

•ՖՐԱՆՍԱԿԱՆ ֆուտպոլի նոր տարրերէն միջնապահ Էտուար Սիսի, որ մաս կը կազմէ մայրաքաղաքի կազմին՝ Փարիզ Սեն Ժերմէնին, շաբաթասկզբին իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ վերականգնուած իր արձակուրտութեան ընթացքին իր կազմին մարզիկներուն հետ յաջողութեան գիշարութիւնները քանակին:

ԹՐՔԱԿԱՆ ԲԱՆՏԵՐՈՒ...

Շարունակուած Յոլ Էջեկ Ռոտիկանութիւնը Պոլիս Անգարա ժամանած շուրջ 250 անձերու ըսած է, թէ անոնցմէ միայն 15ին պիտի արտօնուի Անգարա մտնել: Յուսարարները, որոնք ուզած են արդարացաւորութեան նախարար Հիլմէլ Մամիթըրի հետ տեսակցութիւն ունենալ, մերժած են առաջարկը եւ գտնուին նստած են:


նէ բոլոր լուսարձակները եւ նախորդ տարիներէն շատ աւելի լաւ արդիւնքներ պիտի արձանագրէ:

22 տարեկան Սիսի յառաջիկայ Ուրբաթ օր իր դէմ պիտի ունենայ իր նախկին կազմը՝ Ռէննը: Փարիզ Սեն Ժերմէն եղանակը սկսաւ յաղթանակով, 3-1 արդիւնքով: Անշուշտ խումբը մը կարելի չէ դատել մէկ մրցումով, սակայն մարզիչ Ֆիլիպ Պերժըրօ կրցած է ամբողջութեամբ նոր եւ խոստումնալից կազմ մը յառաջացնել: Ան ունի հիմնական երկու նպատակ. շահիլ երկրին ախոյեանութիւնը, ինչպէս նաեւ տիրանալ «Չեմփիոնս Լիկ»ի տիտղոսին:

Վերջին անգամ 1993-94 եղանակին Ֆրանսայի ախոյեան հանդիսացած Փարիզ Սեն Ժերմէն հինգ տարի ի վեր երեք անգամ հանդիսացած է փոխ ախոյեան:

Սիսին ներշնչողը, թէ իր կազմը լաւ արդիւնք պիտի արձանագրէ, Սիլվա Անելի կազմին՝ Փարիզ Սեն Ժերմէնին, շաբաթասկզբին իր կատարած յայտարարութեան ընթացքին ըսաւ, թէ վերականգնուած իր արձակուրտութեան ընթացքին իր կազմին մարզիկներուն հետ յաջողութեան գիշարութիւնները քանակին:

ՔՈՒՐՆԻՔՈՎԱ ՊԻՏԻ ՉՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՏՆԻԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ



ԱՃՈՎ ԶՈՐԵՊՈՎԱ

Ռուսիոյ թենիսի ֆետերասիոնին նախագահ՝ Շամիլ Թարփիչեւ, երէկ «Ռոյթթըր»-ի հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին ըսաւ. «Աննա Քուրնիքովա մերժեց Ռուսիոյ կազմին հետ իր մասնակցութիւնը բերել Սիտնիի Ողիմպիականի մրցումներուն, յայտնելով, որ այդ մրցումները կը խանգարեն իր ծրագրերը: Հակառակ անոր, որ մենք դուրսը բաց ձգեցինք անոր դիմաց, բայց ան գործանախօրէն մերժեց մեր առաջարկը»:

Շատերու համաձայն, ան չէր ուզած մաս կազմել Ռուսիոյ կազմին, այն պատճառով, որ Մոսկուայի մէջ տեղի ունեցած իր կատարած վեց մրցումներէն (անհատական եւ գոյցի) արձանագրած էր միայն մէկ յաղթանակ:

Ուրիշներու կարծիքով, ան չէր ուզած մասնակցել Ողիմպիականի մրցումներուն, որովհետեւ նախ կրնար վիրաւորուել եւ իր մասնակցութիւնը չբերել ետ: Էս. Սիլվիան, իսկ երկրորդ՝ եթէ մասնակցէր, ոչ մէկ կէտ պիտի ապահովէր, բարեաւելու համար իր գիրքը աղջկանց միջազգային ընդհանուր դասաւորման մէջ:

19 տարեկան Քուրնիքովա, որ այժմ աշխարհի ընդհանուր դասաւորման մէջ դասուած է 18րդ, կը նկատուի իր երկրին լաւագոյն թենիսիստը:

Թարփիչեւ ըսաւ սակայն, որ արդէն իսկ կազմած է Սիտնիի ողիմպիականին իր կազմը, որոնք կը բաղկանան հետեւեւաններէն. Էլենա Տեմենիշեւա, Անասթասիա Միսքինա եւ Էլենա Լիբովիտեւա պիտի մասնակցին անհատական մրցումներուն, իսկ վերջին երկուքը՝ նաեւ գոյցի մրցումներուն:

Ինչ կը վերաբերի տղոց մրցումներուն, նախկին աշխարհի թիւ 1 դասուած Եւգենի Քաֆենիքով եւ Մարաթ Սաֆին պիտի մասնակցին թէ՛ անհատական եւ թէ՛ գոյցի մրցումներուն:

•ՔԱՅԵՆԻՔՈՎԻ նման, աղջկանց ընդհանուր դասաւորման պարագային իր իրքը գրաւող գոլիցերիացի Մարթինա Հինկիս չէր ուզած իր երկրին հետ մասնակցութիւնը բերել Սիտնիի մէջ տեղի ունենալիք ողիմպիականին, յայտնելով, որ չ'ուզէր ինքզինք նեղի մատնելով վիրաւորել, մասնաւոր, որ արդէն դժուար եղանակ մը ըրողած էր:

ՊԱՐԱԽԱ ՄԻԱՑԱԻ ՎԱԼԵՆՍԻՆ

Սպանիոյ Վալենսիան իր պատմութեան մէջ փոխանցման նոր մրցանիշ մը հաստատեց, երբ Ալթեթիքօ Մատրիտէն իր կազմին միացուց միջնապահ Ռուպին Պարսիսան, վճարելով 11 միլիոն տոլար:

Այս գծով Վալենսիայի նախորդ մրցանիշը հաստատուած էր 1997ին, երբ կազմին միացած էր արժանութիւն յառաջապահ Արիել Օրթեկան՝ 10 միլիոն տոլարի փոխարէն:

1996ին Ռեալ Վալատիլտէն Ալթեթիքօ Մատրիտի միացած Պարսիսա, երեք եղանակ իբրեւ պահեստի մարզիկ նկատի առնուելէ ետք է միայն, որ սկսած էր իբրեւ հիմնական մարզիկ նկատի առնուել, այդ ալ դեռ անցեալ եղանակին:

Վալենսիայի միանալով, ան իր կողքին պիտի ունենայ սպանացի Կալլքա Մենտիքան, արժանութիւն Բելի Կոնպալտը եւ նորեկներ՝ Ֆրանսացի Տիտի Տեչանը եւ պոլեմիացի Յալքո Չահովիլը:

Նախքան Պարսիսայի փոխանցումը, Վալենսիային հետացած էին Ֆրանչէսքօ Ֆարինոս (փոխանցուած՝ Ինթեր Միլանի) եւ ժերար (փոխանցուած՝ Պարսելոնայի):

ՆՈՅՆԵՐ ԴԻՆ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ՄԱՏՆԵՄ ԱԼ ԿՈՐԸ

Կ'ԸՍԵ ՊՈՒՇ

ՖԻԼԱՏԵԼՅԻՒ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Մ. Նահանգներու Հանրապետական Ազգային Համագումարը Երեքշաբթի օր շարունակուեցաւ Ֆիլատելֆիոյ մէջ: Ճորձ Տապըլեու Պուշ, որ Հինգշաբթի գիշեր պաշտօնապէս պիտի ընդունի կուսակցութեան նախագահութեան թեկնածուն դառնալ, Երկուշաբթի օր, արքայականին հաղորդակցութեամբ կարճ խօսքի մը ընթացքին լայտարարեց, թէ Նոյեմբեր 7ի ընտրութիւններուն դեմոկրատ իր մրցակիցը՝ Ալ Կորը պարտութեան պիտի մատնէ:

Երկուշաբթի օր հրապարակուած հարապրոյցի մը արդիւնքները ցոյց տուած են, թէ Պուշ միայն 4 առ հարիւրի առաւելութիւն մը ունի՝ բաղդաւած Կորի:

Կոր կը յուսայ առաւելութիւն ապահովել դեմոկրատներու չորսօրեայ համագումարին ընթացքին, որ պիտի բացուի Օգոստոս 14ին, Լոս Անճելըսի մէջ:

Հանրապետական համագումարին առաջին գիշերը խօսք տուած գլխաւոր անձնատրութիւններու կարգին եղած են Պուշի կինը՝ Լորա եւ ամերիկեան սպայակոյտի նախկին պետ հանգուտեան կոչուած Կորալ Բոլի Փաուլը:

Տիկին Պուշ խոստացած է ներկայանալ, որ իր ամուսինը «մեծ նախագահ մը պիտի ըլլայ»:

Փաուլը, որ ամերիկեան ուժերու ընդհանուր հրամանատար եղած առաջին սեւաւորն է, Պուշի մասին խօսելով յայտարարած է, թէ ան մարդոց մասին կը մտածէ եւ յաջողած է «աւելի ու աւելի մեծ թիւով փոքրամասնութիւններ ի մի բերել՝ անոնց ամէնէն իւր կարիքներուն գոհացում տալով»:

Պուշի կողմէ փոխ նախագահի պաշտօնին համար ընտրուած Տիք Չէյնի, որ պաշտպանութեան նախկին նախարար եւ քուկրեսի անդամ է, Երկուշաբթի օրուան նիստին ներկայ գտնուած է: Ան իր խօսքը պիտի արտասանէ Զորքշաբթի օր (այսօր):

Հանրապետական համագումարի պատկերասփռումին կուգահեռ, դեմոկրատ Ազգային Յանձնախումբը Երկուշաբթի օր սկսած է 18 նախագներու մէջ յարձակողական բնոյթի պատկերասփռումներ «ծանուցումներ» ցուցադրել: Անոնք կը դատապարտեն Պուշի եւ Չէյնի կեցւածքները՝ կենսոլորտի եւ աղքատներու վերաբերեալ, յատկապէս՝ երեխաներու պարագային:

ՌԻԶԱ ԽԱԹԵՄԻ Կ'ԸՍԵ, ԹԷ ԲԱՐԵԿԱՐԳԶԱԿԱՆ ԻՐ ՃԱԿԱՏԸ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ Է ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ԹԵՀՐԱՆ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Իրանի բարեկարգչական մեծագոյն ճակատին ղեկավարը յայտարարեց, որ իր շարունակող մեծամասնութիւնը ապահոված է նոր խորհրդարանին մէջ, բայց նախապէս ճակատին հետապնդած բարեփոխութիւնները կը բախին քաղաքական եւ պետական կառոյցներու կողմէ յարուցուած լուրջ խոչընդոտներու:

Իսլամական Իրան Մասնակցութիւն ճակատի ղեկավար Մոհամէտ Ռեզա Խաթեմի ըսաւ, որ բարեկարգչական երեսփոխանները մօտաւորապէս 216 արժող ունին խորհրդարանին մէջ (290 արժող): Սակայն ան շեշտեց, որ թիւը եւ մեծամասնութիւնը ըլլալը բարարար չեն բարեկարգումները իրագործելու համար: «Իրանի մէջ մեծամասնութիւնը ըլլալը իշխանութիւն ունենալ չի նշանակեր», ըսաւ Ռեզա Խաթեմի: Ան դիտել տուաւ նաեւ, որ կարելի չէ բարեկարգումներու բոլոր ծրագիրները անմիջապէս իրագործել, սակայն յստակ է, որ խորհրդարանը լայն իրաւասութիւններ կու տայ բարեկարգչականներուն: Խաթեմի ըսաւ նաեւ, որ ընտրութիւններէն առաջ, բարեկարգչական ճակատը ունեցր ջանք մը 208 անուններու, որոնք խոստացած են գործակցիլ: Այսօր այդ թիւը 216 է, սակայն կարելի չէ հաստատել, որ բոլորը ամէն առիթներու միասին պիտի աշխատին, աւելցուց ան: Ուստի պիտի գործակցին կարգ մը առիթներու, ուրիշներ՝ այլ առիթներու: Սակայն միշտ ալ կարելի պիտի ըլլայ օրինագիծներ առաջարկել եւ ապահովել անոնց վաւերացումը, ըսաւ Ռեզա Խաթեմի: Սակայն ան նաեւ դիտել տուաւ, որ պահպանողական ուժերը միշտ ալ պիտի փորձեն արգելակել բարեկարգումներու իրագործումը:

Իրանի իսլամական կառոյցին մէջ, որեւէ նոր օրէնք պետք է ապահովէ վաւերացումը սահմանադրութեան կիրարկման հսկող խորհուրդին, որ կազմուած է պահպանողական կրօնաւորներէ:

Իրանի Իսլամական կրօնական խորհուրդը մը առաջին անգամ ըլլալով շնչեց օրէնք մը, որ կ'արգիլէր կիներու՝ առաջնորդել հաւաքական աղօթքներ: Իսլամական վեց դատաւորներէ կազմուած խորհուրդը որոշեց, որ կիները կրնան առաջնորդել հաւաքական աղօթքներ, որոնց մասնակիցները նոյնպէս կիներ են:

ՊԵՐԼԻՆԻ ՄԷՋ՝ ԵՐԿՈՒ ԶԻՐՏԵՐՈՒ ԴԵՄ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՃԻՌ

ՊԵՐԼԻՆ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Պերլինի մէկ ատենարը Երեքշաբթի օր երկու քիւրտերու դէմ բանտարկութեան վճիռ արձակած է: ՔԱԿԻ հաշտութեան հարցախոսակցութեան ղեկավարը ըլլալու յանցանքով: ՔԱԿ Գերմանիոյ, ինչպէս նաեւ Թուրքիոյ մէջ արգիլուած կուսակցութիւն է:

Ատենարը 28 տարեկան կին մը 2 տարի 2 ամիս բանտարկութեան դատապարտած է Գերմանիոյ մէջ գործած ահաբեկչական կազմակերպութիւնը հաստատած ըլլալուն համար: 43 տարեկան տղամարդ մը 2 տարի եւ 6 ամիս բանտարկութեան դատապարտուած է ունեցած իւրաքանչիւր կազմակերպութեան անդամ լինելու պատճառով:

Ամբաստանեալ քիւրտերը ատենարն ըսած են, թէ փորձած են իրենց նպատակները իրականացնել քաղաքական միջոցներով եւ ո՛չ բռնութեամբ: Անոնք Հոկտեմբեր 1999ին ձերբակալուած են:

ՅԱՍԵՐ ԱՐԱՅԱԹ ԿԸ ՓՈՐՁԷ...

Շարունակուած Ա. Էջեմ



Օլարայթ Վարդանի մէջ մամուլի ասուլիսի պահուն:

Թեան գործընթացին ներկայ իրավիճակը. Բեմի Տէյլիտի վեհաժողովին ձախողութեան լուրսին տակ: Միջին Արեւելքի իսլաւորութեան գործընթացը քննարկումի նիւթ դարձաւ նաեւ Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլինթոնի եւ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի հեռաձայնային մէկ հարցազրուիչութեան ընթացքին: Սպիտակ Տան բանբերը ըսաւ, որ Շիրաք Բիլինթոնի վեկուցած է Արաֆաթի հետ ունեցած իր հանդիպումին մասին: Բանբերը աւելցուց, որ Շիրաք իրախուսած է Բիլինթոնը, որ պէտք է շարունակէ ճիշդ լայնաշք մղելու համար Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը:

ՕԼԱՐԱՅԹ՝ ՎԱՏԻՎԱՆ Կ'ԱՅՑԵԼԷ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատթէյն Օլարայթ երէկ Վատիկանի մէջ տեսակցութիւն ունեցաւ արտաքին գործոց նախարար Ժան Լուի Թօրանի կարտինային հետ՝ խորհրդակցելու համար Երուսաղէմի սպազային մասին:

Օլարայթ տեսակցութիւն չունեցաւ Յովհաննէս Պօղոս Բ. պապին հետ, որ անցեալ շաբաթ վերստին կոչուողած էր միջազգային հոգատարութեան տակ դնելու Երուսաղէմը՝ պահպանելու համար քաղաքին սուրբ դիմագիծը: Իսրայէլ կը մերժէ այս առաջարկը. եւ Ռաշիմկոնը վորս վիզ կը կանգնի հրեական պետութեան կեցւածքին:

Օլարայթ տեսակցութիւն ունեցաւ նաեւ Իտալիոյ արտաքին գործոց նախարար Լամպերթօ Տիբիի հետ, որ դրուատեց Բիլինթոնի ու անոր կառավարչութիւնը, որոնք ճիշդ չեն ինչպէս իսլաւորութիւն հաստատելու համար Միջին Արեւելքի մէջ: Տիբի աւելցուց, որ Իտալիա կը գիտակցի Երուսաղէմի հարցին կարեւորութեան, սակայն կապարդական լուծումը չի ունի անոր:

ՊԱՐԱՔ 90 ՕՐ ՌԻՆԻ ՓՐԿԵԼՈՒ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՌԻՆԻ ԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաք, որուն կառավարութիւնը տապալուած փրկուած էր Երկուշաբթի գիշեր, 90 օրուան առիթ մը ունի փրկելու:

համար իր կառավարութիւնն ու պաղեստինցիներուն հետ խաղաղութեան գործընթացը, յայտնեցին բաղադրական հարցերու մեկնաբաններ երէկ: Անոնք դիտել տուին, որ թէեւ Պարաքի կառավարութիւնը փրկուեցաւ, սակայն վարչապետին իշխանութիւնը բաւական խախտուած վիճակով գտնուի: Մեկնաբանները կ'ակնարկէին Շիմոն Փերէսի պարտութեան: Պարաք վորս վիզ կանգնած էր Փերէսի թեկնածութեան, սակայն Քեւեթը Իսրայէլի նախագահ ընտրեց արտաքին գործոց նախարար Ժան Լուի Թօրանի կարտինային հետ խորհրդակցելու համար Երուսաղէմի սպազային մասին:

Միւս կողմէ, Փերէս երէկ շրջանցեց իր պարտութեան առթած ցնցումը՝ յայտարարելով, որ ժամանակ պիտի չվատնէ մտածելով իր ձախողութեան մասին: Ան ըսաւ, որ երկիրին համար հասած է ճշմարտութեան պահը. եւ թէ յառաջիկայ 90 օրերը ճակատագրական պիտի ըլլան, որովհետեւ ատոնք են, որ պիտի վճռեն Իսրայէլի ճակատագիրը:

ԳԱՍ ԱՌԷՔ...

Շարունակուած, 2րդ էջէն

անկումը կ'ըլլայ անխուսափելի:

Հայրութեան երամը պիտի թափահարէ իր թեւերը՝ ազգ-առաջնորդին հետեւելով: Անշատողական թռիչքները, կեղրոնախոյ ըմպելները կը տկարացնեն մեզ: Այս է դասը բնութեան, այն է բնական ընթացքը կարգապահ լինելու: Այս է գանձը հայուն աշխարհիկ: Ու հալը հարուստ է յաւերժօրէն իր բոնցքուած հօգորութեամբ:

Միասնականութեան ձայնն է Ազգին Չայնը...

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանիշներու փոխանակման սակը նեանեալն էր երէկ կէսօրին.	
Ամերիկեան տարրի փոխանակման սակը.	0.9143
Ֆրանսական ֆրանք.	7.1697
Գերմանական մարք.	1.4868
Նորվեգական ֆլորին.	2.1378
Չեխոսլովակական ֆլորին.	2.4087
Չեխոսլովակական ֆրանք.	1.6909
Պոլսեան ֆրանք.	44.092
Իտալական լիր.	2116.37
Ճապոնական ե.է.է.	109.24
Շուեդական քրոն.	9.2796
Նորվեգական քրոն.	8.962
Գերմանական քրոն.	8.1506
Մէկ սթերլին.	1.4917

ԽԱՉՐԱՌ ԹԻՒ 4627

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՅԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

- ### ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՅ
- Ոսկեծաղիկ - Խաղաթուղի մէկ կողմէ:
 - Սպիտակամազ - Լ. Օ. Խաչի մասնաճիւղերէն:
 - Շան ձագ - Յորդ օր:
 - Ժխտական մասնիկ - Բուրի ձայն - Արական օտար անուն:
 - Սկսի, ձեռնարկէ:
 - Ստացական դերանուն (Հակ.) - Իրաքեան լորտու գործակալութիւն:
 - Դաշնակցական նախկին մամուլէն - Աղեկատ:
 - Ժամանակի միաւոր - Զուարթ:
 - Իրական օտար անուն - Հայ գուտան:
 - Փոքրացնող մասնիկ - Խալտախիւր (ձի):
 - Ֆրանսական քաղաք - Համեմային երուստական ընթացք:
 - Ա. Մ. Նահանգներէն - Աղամանդ:
 - Ուղեղեակ - Մանրափար:
 - Աստուած՝ Հին կտակարանի մէջ - Որսի միս:
 - Աղեղեակ - Յուցական անական:
 - Ստացական անական - Կոթնեւոր ծառայող մաս:
 - Օսմանեան ստրուկ - Զուարթական անական:
 - Մտացական անական - Կոթնեւոր ծառայող մաս:
 - Հայաստանի հնավայրերէն - Ժուռ:
 - Անպատմելի, աննկարագրելի - Որ:
 - «Գիշերեք Միջին Լուսաբաց» երկին չեղի-նակար - Ամբողջ:

ԹԻՒ 4626

ԽԱՉՐԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Պ	Ա	Ն	Կ	Լ	Ս	Ե	Շ	Ս	
2	Ա	Ր	Օ	Ս	Ի	Լ	Ա	Չ	Ի	Ն
3	Ն	Ա	Թ	Կ	Ր	Ո	Ն	Ա	Ս	Մ
4	Ս	Ե	Ի	Ս	Ե	Ր	Ն	Ա	Կ	Փ
5	Ա	Ա	Ա	Ա	Լ	Լ	Ա	Ս	Ա	Ա
6	Չ	Լ	Ա	Գ	Ո	Յ	Լ	Դ	Ե	Ր
7	Դ	Ի	Ի	Ի	Ղ	Ա	Բ	Ե	Ր	
8	Ն	Ս	Կ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Կ	
9	Չ	Ի	Ն	Ա	Ե	Ր	Ն	Ս	Մ	
10	Լ	Ա	Ն	Ե	Ր	Ա	Ս	Մ	Ս	Ց
11	Ա	Ր	Ա	Գ	Ր	Լ	Ք	Ի	Ր	Տ

ՍԱԿԱՐԱՆ

Պէշրուքի սակարանին մէջ օտար դրամանիշերու փակման սակագիծերը հետեւեալներն էին երէկ.

Սուրիական քրոն	31.50 - 33.50	լ.ն.
Իրաքեան տիւնար	50.00 - 51.00	լ.ն.
Պանթիւնեան տիւնար	3990.00 - 4010.00	լ.ն.
Ֆուէլլեան տիւնար	4895.42 - 4925.42	լ.ն.
Յորդանանեան տիւնար	2118.24 - 2128.24	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տիւնար	408.43 - 412.42	լ.ն.
Մեուտական ռիալ	399.90 - 403.99	լ.ն.
Օսմանեան ռիալ	3900.00 - 3930.00	լ.ն.
Ֆարաքեան ռիալ	412.15 - 416.15	լ.ն.
Եգիպտական կիւնէ	430.72 - 434.72	լ.ն.
Անգլիական սթերլին	2256.99 - 2258.99	լ.ն.
Գերմանական մարք	710.45 - 712.45	լ.ն.
Չոլանտական ֆլորին	630.96 - 632.96	լ.ն.
Ֆրանսական ֆրանք	210.49 - 212.00	լ.ն.
Չեխոսլովակական ֆրանք	898.31 - 901.31	լ.ն.
Պոլսեան ֆրանք	32.62 - 34.62	լ.ն.
Գերմանական քրոն	230.21 - 250.10	լ.ն.
Սլոուակական ֆեզէթ	162.74 - 164.74	լ.ն.
Թրքական լիր	8.02 - 9.02	լ.ն.
Թրքական լիր	0.0365 - 0.0370	լ.ն.
Կիւպրական փաուստ	2426.72 - 2428.72	լ.ն.
Իտալական հազար լիր	717.10 - 719.12	լ.ն.
Ճապոնական հազար ե.է.է.	13082 - 14084	լ.ն.
Ամերիկեան հազար ֆրանք	2450 - 2452.00	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501.00 - 1514.00	լ.ն.
Ֆրանսական տոլար	1013.56 - 1015.56	լ.ն.
Աւստրալիական տոլար	868.88 - 870.88	լ.ն.
Եւրօ	1391.91 - 1393.93	լ.ն.

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000	լ.ն.
Իրաքեան մէկ ոսկի	105,000 - 115,000	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	83,000 - 93,000	լ.ն.
Մեքսիկական փետոս	496,000 - 516,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ		
ժոյլ ոսկի	13,250,000 - 13,750,000	լ.ն.
Մէկ օնս ոսկի	276,60S - 278,25 S	
Մէկ օնս արծաթ	4.95 S - 4.98 S	

ՄԱՆԻՏԵՐԻ ԲԱՅՆՆԵՐՈՒԹՅՈՒՆ		
Գիճի Ա. ճշգրտմ	Գիճի Բ. ճշգրտմ	
Ա. կարգի	6 314	6 314
Բ. կարգի	7 00	6 718